

ԵՐԵՏԱՍԱՐԴ ԶԱՅՆԵՐ

(Ա.ԼՄԱՆԱԿ)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՏԱՍԱՐԴ ԳՐՈՂՆԵՐԻ
ԲԵՄՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ Զ-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌՅԱՆ

— — — — —

„ԱՎԱՆՔԱՐԴԻ“ ԵՎ „ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԻ“ ՀՅՈՒԱՐԱԿԱՆԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ — 1949

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗДНЕ

указанного здесь срока

Колич. пред. выдач _____

891.99-82

~~86~~

ԱՅՈՒԹՎԱՆ Լ 1961 թ.

A 32/156

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԱՅՆԵՐ

(ԱԼՄԱՆԱԿ)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂՆԵՐԻ
ՌԵՍՊՈՆՏԻՎԼԻԿԱԿԱՆ 2-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԵՎ

14.4.33



,ԱՎԱՆԳԱՐԻԻ“ ԵՎ ,„ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԻ“ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 1949

МОЛОДЫЕ ГОЛОСА

(АЛЬМАНАХ)

Ко второму республиканскому совещанию
молодых писателей Советской Армении

Ереван — 1949 г.

Ա. Ռ. Ռ. Զ Ա Ր Ա Ր Ա Վ Ի Կ

Ես քո վլարած կովում զինվոր էի համեստ,
Նոնակակիր զինվոր մի հասարակ.

Քո մի խոսքը կտրուկ վոլգային ինձ գամեց,
Մյուս խոսքդ՝ մինչև թեռլին տարավ:

Եվ երբ հաղթանակի դրոշը ծածանվեց
Քո մի խոսքով ես տուն վերադարձա,
Եվ առօրյա կյանքի պայքարներում այս մեծ
Ես դրչի մի համեստ զինվոր դարձա:

Վատ է այն զինվորը (ասված է այս վաղուց)
Որ գեներալ դառնալ չի ցանկանում,
Որ դադարի սլահին չունի մտքի զեղում,
Որ դնդեր չի մտքով ոտքի հանում:

Արդ դինվոր եմ դրչի: Քո խոսքով եմ դարձյալ
Ես դրիչն իմ շարժում ու քոնն եմ ես համակ,
Եվ թե երազում եմ ես գեներալ դառնալ,
Այն էլ քե'զ արժանի երդ գրելու համար:

ՀԵՐԱԾ

Նորաշեն ակումբը մարդկանցով լիքն է,
Դահլիճը ծափերից թնդում է,
Նա հուզված նստել է ու չգիտի ինքն էլ,
Թէ ինչպես եկավ այս խնդումը:
Նա հուզված նստել է, խորհում է, հիշում է,
Գարուն,
Ամոան տաք օրերը,
Հիշում է բերքառատ ոսկեվոր աշունը,
Ու թաքոն նայում է կրծքին իր,
Ուր պայծառ յուշերից փայլում է աստղիկը,
Ոսկեգույն աստղիկը հերոսի,
Ու պատմում բոլորին,
Բոլորին պատմում է,
Իր մասին:
Պատմում է աստղիկն այն—
Ամառ է, կեսօր է,
Եվ ինքը՝ հերոսը դաշտումն է,
Քրտինքը ծորում է ճակատից, և նրան
Թվում է, թե դեռ իր վաշտումն է,
Ու նրան թվում է, թե նորից մարտումն է,
Ուզում է գրավել բարձունքը,
Բայց նա իր տանն է—կոլխոզի արտումն է
Եվ ամեն մի արտ բարձունք է:
Այս տարի նա քանի՛ բարձունք է գրավել,
Այդ խիզախ, թխաղեմ պատանին—
Մինչև այս դահլիճն ու այս փառքին է հասել,
Հասել այս ոսկե մեղալին:
Հերոսը բեմում է: Թնդում են ծափերը,
Բոլորը կանչում են «ուռա».
Բայց հերոս նա դաշտում էր,
Իսկ այստեղ քաշվում է,
Վառվում են աշքերը կրակ:
Այստեղ նա հուզվում է, բայց հարցին
Թե ինչպե՞ս
Հասավ այս ոսկե մեղալին,
Պատասխան է տալիս համարձակ, անվարան
— Հնգամյա՛կ, Հայրենի՛ք, Ստա՛րին:

ՌՈՒՍԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆ

Թե տիսրությունը սրտիս է հյուսել
իր պաղ մատներով մի եղերերգ,
Արիացել եմ, երբ քեզ եմ լսել՝
Ռուսակա'ն հնչյուն, ռուսակա'ն երգ:

Քեղնով լենինն է հորս հետ խոսել,
Երբ նա ընկած էր վշտաբեկ,
Տանջանքից մայրս է ձեռքը քեզ պարզել,
Ռուսակա'ն հնչյուն, ռուսակա'ն երգ:

Դու', աղատության բարբառն ես հյուսել,
Դու' ոգու խոյանք ու տարերք,
Քեղնով ենք խինդի մեր խոսքերն ասել,
Ռուսակա'ն հնչյուն, ռուսակա'ն երգ:

Քեղնով դանդրահեր Պուշկինն է խոսել,
Մայակովսկին՝ իր ձայնով մեկ,
Դու քաղցրությամբ ես իմ սիրող հւսել,
Ռուսակա'ն հնչյուն, ռուսակա'ն երգ:

Դու խաղաղության խոսքերն ես ասւ, մ,
Ամբողջ աշխարհը էլ անեղերք՝
Քո հաղթանակի ձայներն է լսում,
Ռուսակա'ն հնչյուն, ռուսակա'ն երգ:

ԱՏՈՒԳՄԱՆ ԳՐՔՈՒՅՑԿ

Վաղուց եմ օրոցքը թողել մանկական
Ու թողել մանկությունն իմ երազուն,
Այս կյանքն իմաստուն է ու խոր այնքան,
Եվ ես ուսանում եմ նրա լեզուն:
Լսարանն իմ մեծ է... մի ողջ աշխարհ,
Իմ առջև օրերն են բացվել ահա,
Եվ դրում եմ նրանց թերթերին վառ
Այս մեծ հնդամյակի մասին՝ լեկցիա:

Նորից իմ քրտինքն չ առատ հոսում,
Ելնում են շենքերը մեր բազմահարկ.
Հարազատ մուրճիս լեզվով խոսուն
Քննություն եմ հանձնում և ստուգարք,
Որ վաղն ինձ փրափունք տրվի հաստատ՝
Ուսանելու կյանքի կուրսում հաջորդ,
Որ վաղն հրճվանքով, հողով հպարտ
Կոմունիզմի ձեռքը սեղմեմ կրքուտ:

Իսկ երեկ, երբ ողջ հողագնդում
Դուիում էր նժույզը պատերազմի,
Զինվորիս հաղթական երթն էր թնդում
Դեպի Բեռլինները մեր թշնամի.
Ավտոմատիս ձայնով հատու և դու

Կրկին ես քննություն էի հանձնում,
Խոսքս հրեղեն էր, խոսքս հղոր
Եվ դիալուկ էր... հարցրեք այդ թշնամուն:

Վաղուց հասկացել եմ կյանքի լեզուն,
Նրա քաղցրությունն եմ ճաշակել խոր,
Իսկ ոռնոցից մահի՝ ես չեմ սարսում,
Եվ այդ ստուգված է մինչև այսօր:
Ու կարող եմ ցույց տալ ես աշխարհին
Ստուգման գրքույլս-սիրտս, ահա,
— Կարդացեք էջերում գրված է հինգ,
Եվ բաց է արդեն էջը վաղվա:

—○—

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(Հոկտեմբերյան)

ՀԵՐԱՍՆԵՐԻՆ

Հոգիս հաղարտ ու հարազատ երգիս պես,
Հոգով ձեզ հետ, միշտ ձեզանից անբաժան
Ռողարկում եմ արևավառ երգս ձեզ
Ու նետում եմ սիրոս սրտանց՝ ձեզ ճամբան։

Դուք, որ այսօր փառքի, պատվի թևերով
Տուն եք դառնում հերոսական մայտերից,
Կովից բերած մեր աշխարհի բախտը ծով,
Ու խնդությունն հաղարավոր սրտերի։

Հավերժ լինի թող այս տոնը հաղթության,
Թող ձեր փառքով բյուր աշխարհներ հրդեհվեն,
Թող ձեր փառքը, որպես ոսկե մի շղթա,
Անցնի, շողա դարերի մեջ լուսեղեն։

Հպարտ եղիր, իմ լեռնական հայրենիք,
Հպարտ էիր ինչպես կովում այս դժնի,
Ազատության բարձունքներից անառիկ
Քո վառ ու բորբ դրոշն է՛լ ցած չի իջնի։

-○-

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԱՅԳԻՆ

Երեկ էր տակավին, որ այս վեհ բարձունքում,
Անջրդի և խոսլան,
Մուրճի և քլունգի երգերի հորձանքում
Կյանք տվինք մենք նրան...
Շունչ տվինք մենք նրան՝ զովաշոնչ այս այգուն,
Որ հույզ է նոր խինդի
Ու փարված մեր ծաղկող ոստանի կուռ մեջքին
Դարձել է մի դոտի.
Երեկ էր տակավին... Բարձունքում այս խնդուն
Վեհանիստ, օղածե,
Զկային թուփ ու ծառ, առուներ կենսատու
Եվ հավքեր սրաթե...
Իսկ այսօր մանկիկս՝ ցնծությունն իմ վաղվա,
Խաղում է այդ այգում,
Ժպտում է նա սիրով ծաղկունքին վառ, ցողված,
Թրթոռում ու երգում:
Եվ այգում բարձրացած հուշարձանն այս շքեղ
Հաղթության ու փառքի,
Հսկում է վեհորեն, որ մանկան խինդն անշեղ
Հորդի հար ու ծաղկի:

ՍՄԲԱՏ ՕՀԱՆՅԱՆ

(Ախուրյան)

ԵՐԳ. ԳՐՎԱԾ ԴԱՇՏՈՒՄ

Դու աշխատում ես էն սարի լանջին,
Քո օղակի հետ քար ես հավաքում,
Ես՝ երդս ձուլած քո զնդուն կանչին,
Երգում եմ ձայնով վճիռ ու մաքուր:
Քար ես հավաքում, մաքրում դաշտն անծայր
Ու աշխատանքիդ երդն է զողանջում,
Յոլում է դեմքիդ ժայիտը պայծառ,
Կարծես, ինձ էլ ես զու մրցման կանչում:
Ինձ էլ ես դյութում խինդով վառ ու թով,
Ինձ էլ ես հուզում քո օղակի հետ,
Դե՛, դործենք մեկտեղ, որ դառնտնք շուտով,
Դու բարձր բերքի, ես՝ երդի վարպետ:

-○-

ՍԵՎԱՆԻ ԼՈՒՅՍԵՐԸ

Սևանի կապույտ տլիքների հետ
Լողացել եմ ես, խաղացել այնքան,
Անուշ խաղերս եմ խառնել խնդավետ,
Եմ մանկությունն եմ ես խառնել նրան:

Հիմա գետերը կապույտ Սևանի
Մեր փողոցներում լույսեր են անմար,
Ու վառվում են ջինջ ամեն մի ոյունի
Ու լույս են տալիս ամենքի համար:

Նայում եմ նրանց ու խորհում լոին՝
Իմ վառ, իմ պայծառ մանկությունն անհոգ,
Որ խառնել եմ ես խայտող ջրերին,
Այս լույսերի մեջ չի վառվում, արդյո՞ք...

ՔԱԶԻԿ ԳՐԻԴՈՐՅԱՆ

(ԼԵՆԻՆԱԿԱՆ)

ԼԵՆԻՆԻ ԱՐՁԱՆԻ ԱԽԱՋ

Չպրեցին անունը քո
Պատվանդանիդ քարի վրա,
Եվ չեն գրում երբեք ձեռքով,
Լեռան լանջին, թե որն է նա:
Դու մեր փառքի լեռն ես համերժ,
Գահիդ արևն է ճաճանշում,
Նրանով ես այդքան դու մեծ,
Որ անգիր են քեզ ճանաշում:

ԳՈՒ ԻՄ ՍՐՏՈՒՄ

Դու իմ սրտում ու մեր ծառի կեղևին
Քո անունն ես զրել մի օր գնացել,
Սիրող հիմա՝ ուրիշինն է երևի,
Բայց անունդ է սրտումս անջինջ մնացել,
Ես կուղեի սիրել հիմա ուրիշի,
Ու քո սերը այնքան վաղ է հնացել,
Բայց իմ սրտում՝ ինչպես ծառի կեղեվին,
Քո անունն է տարեց-տարի խորացել:

ԱՉՔԵՐԻՄ ՀԵՏ

Աչքեր, դուք հոգուս պատկերը դարձաք,
Հոգուս կրակն է ձեր մեջ առկայծում,
Պահ տվի սրտիս ես սերն իմ պայծառ,
Մինչ դուք եք նրա գաղտնիքը բացում:
Բացեք, Օ, քանզի ես շունեմ ոշինչ,
Երջանկության մեջ պահելու թագուն,
Չեր մեջ հայրենի սերն է լուսաջինջ,
Աչքեր, մնացեք պատկերն իմ հոգու:

ՓԵՐՈՒԶԱԿԱՆ ԿԱՅՉՔԱՐՅԱՆ

(ԼԵՇԻՆԱԿԱՆ)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՄ

Իմ մանկությունն է թառամել տիսուր
Օտար ափերում պոկված ծաղկի պես,
Սակայն թովիչ էր ու երազաբույր
Վարդը կարոտիս, որ բերել եմ քեզ:

Ոսկի հեքիաթ ես թվացել ինձ միշտ,
Հեռավոր հեքիաթ, սակայն իրական,
Ուր ամեն մի սիրու ապրում է անվիշտ,
Ուր բոլորն են իրար բարեկամ:

Եվ ես՝ խնդության արցունքն ոչքերիս,
Փարփում եմ ահա հայրենի հողին,
Եվ երախտապարտ փառք եմ քեզ տալիս,
Քեզ՝ իմ նոր կյանքի փառոս, Ստալին:

-○-

Ե Ր Ե Վ Ա Ն Ի Ն

Նորքի բարձունքից նայում եմ ահա
Գեղեցիկ ու նոր մեր Երևանին,
Եվ իմ աշքերի տուած են հիմա
Կողք կողքի շարված շենքերը կրկին:

Ու դրանց միջով անցնում է ճամփան,
Ճարդարված պես-պես, սիրուն ծառերով,
Մի սիրուն փողոց անունն «Աբովյան».
Ինչքա՞ն եմ անցել ես այդ փողոցով:

Այն կողմը Զանգուն է երդում անհանդիստ,
Փայլում արեի վառ շողերի տակ,
Հեռու ու մոտիկ այգիներ մրգի,
Փոված Մասիսի ղեմը ձյունաթագ,

Ես սիրում եմ քե՛զ, անու՛շ Երևան,
Կյանքի, պայքարի աղմուկդ զվարթ,
Պողոտան շքեղ մեր Ստալինյան,
Բոլորը սրտիս մոտ են, հարազատ:

Նորքի բարձունքից նայում եմ ահա,
Գեղեցիկ ու նոր մեր Երևանին,
Տեսնում եմ նաև տնակն այն հիմա,
Որ իմ հայրենի տունն է թանկադին...

-○-

ԳՈՒՅՆԵՐԻ ԵՐԳԸ

Մի օր գարնանը հորդ անձրեւ տեղաց,
Լողացավ թավիշ դաշտն ալեծածան.
Անձրեից հետո արելը շողաց
Ռւ լեռան լանջին կապեց ծիածան.
Եվ ծիածանի գույները պես-պես,
Մեղմ հովի ձայնով երգեցին այսպես:

Կանաչ գույնն ասաց.— «Ես եմ պատվավոր
Ամբողջ աշխարհի գույներից բոլոր.
Գարնան ծիլերին գույն եմ պարգևում,
Անտառն ու այգին ես եմ զարդարում,
Ե'ս եմ գույն տալիս տերեկին, խոտին,
Թարմ մարդադեռնին, արտ ու աբոտին»...

Կապույտ գույնն ասաց.— «Քույրեր նազելի,
Ես եմ ամենքի գույնը սիրելի,
Ես եմ գույն տալիս ծովին, երկնքին,
Թե յասամանին, թե մանուշակին,
Կապույտ լաղուքն է փովել ամեն տեղ,
Ե'ս եմ գույների պսակը շքեղ»:

Դեղին գույնն ասաց.— «Իմ անուշ քույրեր,
Իմ գույնով շատ կան ծաղիկներ, հավքեր,

Աշնանը դույներ ե՞ս եմ շռայլում,
Որ անտառն, այգին ոսկի են թափում.
Ոսկեղոծում եմ ես արևելքը,
Հասուն հասկերը և այգու բերքը:

Կարմիր գույնն ասաց.— «Քույլեր թանկադին,
Ես հաղթանակի գրոշն եմ անդին,
Ե'ս եմ, որ վարդին դարձնում եմ շքեղ,
Նրա կոկոնը ներկում գունագեղ,
Առանց ինձ չկա կակաչ ու մորի,
Ես եմ սիրելին մարդկանց բոլորի»...

Դեռ երգում էին դույները այսպես
Գովելով իրենց շնորհքը պես-պես,
Արևը լսեց և այսպես ասաց.

— Ինձ եք մոռացել՝ ձեր վեճով տարված,
Ես եմ ձեր մայրը, դուք շողերն եք իմ.
Իրար հետ ապրեք հաշտ ու մտերիմ,
Բոլորդ էլ լավն եք աշխարհի համար,
Զեղնով ես օդում կապում եմ կամար:



ՍՈՆԵՏ ԵՐԵՎԱՆԻՆ

A 32156
Հաղիով քեզնից հեռացած ու մոռացած մի պահ քեզ,
Արդեն ծխում ես, խորունկ կարոտին դեմ իմ աշքին,
Սերդ դառնում է սրտիս մեջ մի հորձանք հրակեզ,
Ու ձեռներս բացվում են քեզ գրկելու վերստին:

Քեզ փնտրում եմ ընդ երկար աշքերիս դեմ կարոտած
Եվ հասնում եմ քեզ հեռվից մտքերիս լույս թևերով.
— Ահա անծայր փողոցներ, որ ձգվում են իմ դիմաց,
Ուր առօրյան է բացվում դվարթածայն ու գերող:

Հիմա դիշեր է այստեղ ու դիշերում անստհման,
Գիտեմ, վառել ես պայծառ այնքան լույսե՞ր դու հեռուն,
Որ հորհորում են իմ դեմ ու քո կյանքին ինձ կանչում:

Քեզնից հեռու, բայց քեզնով շնչում եմ ես, Երեան...
Ու անցյալիս դեմ կանգնած միտք եմ անում հիմա ես,
Թե ինչպե՞ս եմ ես ապրել ամբողջ մի կյանք առանց քե՛ղ:

-○-



ԱՐԴԱԼՈՒՅՍ ՄԻԹՍՍ

(Լենինական)

ԼԵՆԻՆԱԿԱՆ

Բարձրացել է իմ զեմ Լենինականն իմ նոր
Եվ փովել է շքեղ ահա տչքիս տռաջ,
Բյուր շենքեր նորակերտ, վերծիգ ու փառավոր,
Փողոցները ասֆալտ, ծառաշարքով կանաչ:

Եվ տեսնում եմ ահա այս նոր փողոցը մեր—
Լենինի պողոտան, այնպես լայն ու ազատ,
Շուրջը ծառեր կանաչ, ձգված փողոցն ի վեր,
Ինձ այնպես մտերիմ, այնպես ինձ հարազատ:

Շենքերն են բարձրացել դեղատեսիլ շարքով,
Ճակատներին փարթամ ողկույզներ քանդակած,
Որոնք շունչ են տռել մարդու ճարտար ձեռքով,
Եվ կամարներ շքեղ՝ արևի փայլ հագած:

Ծաղկի՛ր, այդպես փարթամ, ժպտա արևավոր,
Հայրենի իմ քաղաք, Լենինական իմ նոր:

ԳՐԻԳՈՐ ՅԵՐԵՇԵԹՅԱՆ

ԶԻՆՎՈՐԻ ՄԱՀԸ

Կոխիլ էր թեժ, դիշեր, դեմքու օտար դաշտն էր,
Գլխիդ՝ աշնանալին երկինքն ամպակուտակ,
Գրոհում էր առաջ հաղթական մեր վաշտը,
Երբ դու ընկար՝ կրծքիդ կույր մի դնդակ:

Բնկար, իմ հարազատ, դու շարքային զինվոր,
Ու թվաց թե ոչ ոք չզգաց կորուստդ մեծ.
Միայն լուսինը լուռ նայեց վերքին քո խոր
Ու թաշկինակն ամպի իր աշքերին սեղմեց:

Եվ չլսեց ոչ ոք հառաշանքդ խորին,
Որ խլացակ արկի սուլոցից շար,
Բայց կրեմլում նստած անքուն Զորավարի
Սև մազերից մեկին եղյամ իշավ:

ԷԼՄԻՐ ՄԿՐՏՉՅԱՆ



Գ. Ա. Զ Ե Լ

Իմ հայրենի աշխարհի երկնի բացը երգեմ ես,
թե՛ գարունքվա ամպերի անուշ լացը երգեմ ես:

Այգիները մրգառատ, անտառները զովասոն,
թե՛ լեռների կախարդիչ լուսաբացը երգեմ ես:

Հարհանդ-մարմանդ հովի հետ թոշեմ դաշտերը անափ,
Մեր ոսկեծուի արտերի բույրն ու հացը երգեմ ես:

Շրջեմ հեռու, զմբուխտե եղերքները հայրենի,
Համայնական ծով բերքի Արագածը երգեմ ես:

Իինեմ, ամեն, ամեն տեղ, մտնեմ ամեն սիրտ ու տուն,
Հնձվորների երջանիկ նիստն ու կացը երգեմ ես:

Ծիծաղում ես Հայաստան, գարուններով թովշական,
Գալիքներիդ վարդավառ այգաբացը երդեմ ես:

- ○ -

ԽՈՍՔ ԱԲՈՎՅԱՆԻՆ

Դու շունեցար տնպամ շիրիմ մի հասարակ,
Որի վրա լացեր աչքն իմ ժողովրդի.
Ո՞ւր ես ննջում, ո՞ր ծառի մոտ, ո՞ր քարի տակ,
Ո՞վէ լսել վերջին մրմունջը քո սրտի:

Դուցե Զանգուն է ընդունել մարմինը քո,
Մոր պես սեղմել վշտոտ կրծքին իր ալեզարդ,
Եվ նրա ջինջ կոհակների կապույտ երգով
Քո մեծ սրտի ատրուշանն է մարել Հանդարուտ:
Գուցե ննջում ես դու Հենց նույն այս քարի տակ.
Որի վրա նստած երգս եմ դրում հիմա,
Հայացքիս դեմ Մասիսների ձյունը ճերմակ,
Մրտումս՝ մեր երջանկության երգը անմահ:

Այդ շպիտեմ... Սակայն դիտեմ մի բան Հաստատ,
Որ դու ընկար Հանուն իմ Հայ ժողովրդի,
Դեղջուկ սրտին Հասկանալի խոսքի Համար,
Որ Հորդել է ու դեռ դարեր պիտի Հորդի:
Դու քո սիրուը ճեռքիդ վառած որպես կանթել,
Լույս ոփուեցիր պիշերի մեջ մեր դպրության,
Խիզախ Հայացքդ դարձրիր դեպի այնտեղ,
Ուրկից մի օր շնորհ պայծառ մեր ապագան:

Մեր աշխարհում այսօր խինդ է գարնանալին,
Կյանքի չքնաղ առավոտ է մեր աշխարհում,
Եվ կյանքի բոցով այրած վերքերն իր հին՝
Այսօր մեր ողջ ժողովուրդն է քեզ մեծարում:

ԴԵՐԵՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՃԱԿԱԾՈՅԻՆ ՀՈՒՅ

Հաճախ էինք խորհում խրամատում նստած。
(Զինվորի գործն ի՞նչ է դադարների ժամին)
Բնկերն իմ մարտական մի օր դիրքում ասաց.
«Մայր է եղել թոթով ճիշն իմ առաջին»:

«Իսկ ի՞նչ պիտի լինի կյանքիս բառը վերջին
Ես շգիտեմ և դեռ չի գուշակի ոչ ոք»...
Խվեց որոտ նորից, արկեր շառաշեցին
Ու նետվեցինք առաջ, նորից գրո՛հ, դրո՛հ:

Ծովս էր ոազմադաշտը, շարժվում էինք առաջ,
Ով իմանար, ինչպես, ի՞նչ է կովում կյանքը,
Հրացանն ամուր ձեռքներիս մեջ սեղմած,
Կովում էինք հանուն մարդն ու աշխատանքը:

Ու շատերը ընկան այդ գրոհի պահին,
Բնկավ և ընկերն իմ պիրկ ձեռքերիս վրա.
«Մնաք բարով բո...լոր և դռւ իմ հայ...րե...նիք»,
Վերջին բառն էլ ասաց ու դրկիս մեջ մեռավ:

- ○ -

ԱԼԲԵՐՏ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

(Ալավերդի)

Հ Պ Ա. Ժ Ե Տ

Մնաս բարով, մանկություն, մնաս բարով, իմ դպրոց,
Այսօր վերջին քննություն, վերջին հույզերն իմ անուշ
Տալիս եմ քեզ, նվիրում, մնաս բարով իմ հնոց,
Ես գնում եմ հեռուներ, բայց մնացեք միշտ քնքույշ:

Մնաս բարով նստարան — իմ տասնամյա բարեկամ,

Մնաս բարով զանտարան — օրորոց իմ խնդության,

Կյանք եմ մեկնում այսօր ևս ու քեզ կրկին ես չեմ դա,

Ես գնում եմ հեռուներ, մնաս բարով, դասարան:

Մնաք բարով իմ խոհուն ուսուցիչներ ժպտերես,
Տվիք անդեռ մանուկին հասուն խելք ու դիտություն,
Բաժանվում եմ ձեղանից, կյանք եմ մտնում այսօր ևս,
Ես գնում եմ հեռուներ, դուք մնացեք միշտ խնդուն:

Իմ ընկերներ ժրաշան, բաժանվում եմ ձեղանից,

Կյանք եմ մտնում այսօր ևս, որպես մարտիկ մի հասուն,

Հեռանում եմ ձեղանից, բայց դուք երբեք իմ սրտից

Չեք հեռանա, իմ անդի՛ն, իմ խնդադին մանկություն:

Հեռանալով ձեղանից խոսք եմ տալիս այսօր ևս

Միշտ պարծենալ ձեղանով, վառ օրինակ կվերցնեմ,

Եսկ թե հանկարծ թշնամին ուռքի կելնի երկրիս դեմ,

Այնժամ դրիշտ երգի հրացանով կփոխեմ:

Սովորեցի դպրոցում — լինել կյանքում պիտանի,

Լինել երկրիս արժանի քաղաքացին ժպտերես,

Սիրել կյանքում վեհն ու մեծ և ապագան ցանկալի,

Մնաք բարով, ընկերներ, կյանք եմ մտնում այսօր ևս:

ԳՐԻԳՈՐ ԶԱԼԵԿՅԱՆ

Ա. Բ Ո Վ Յ Ա Ն

(«ԲԵՄԱԿԱՆ ԵՐԵՎՐ» ՀԱՐՔԻՑ)

Նավամատուցի ամբոխի նման
Ծփում է ծովը հանդիսականի,
Եվ նավահանգիստ հասած նավի պես
Բեմն իր վարագույր-արտղաստներն է հավաքում խաղաղ:
Հանդիսականի ծափերն են հանկարծ շուրջա թևածում,
Ծովային չքնաղ հավքերի նման,
Երբ ալեկոծված բեմ եմ բարձրանում,

Որպես Արովյան...

Վարագույրներն են բացվում համրուեն վերջին արարի,
Եվ ես մոռացած բեմ, հանդիսական,
Շնչում եմ միայն էռթյամբ դերի.
...Գիշեր է, խավար... Սենյակում նստած՝ մտորում եմ լուս
Դեռ վաղուց, վաղուց, երբ հայացքը իմ
Բնկնում էր ազատ բարձունքներն ի վեր,
Տենչում էր հոգիս հավքի պես թևել,
Սնմոռաց մի օր ելա ես Մասսի գաղաթը անհաս,
Բայց բարձունքների սիրահար հոգիս,
Ուզեցին բանտել խցերում վանքի,
Հոգիս, որ տենչաց աղատությունն իմ հայրենիքի:
Ես աղատաբաղձ բախտը կապելով նրա բախտի հետ,
Փառաբանեցի ոռւսաց զորքերի մուտքը Երևան,
Խորտակվեց պարսից լուծը շարադետ,

Սակայն մոլեռանդ ողիք խավարի,
Ծածկում էին միշտ լուսը արեի:
Իմ հայրենիքը լուսավորելու երազն աշքերիս՝
Ես ուսանեցի անդուլ, մոռացած քաղց ու դառնություն,
Հայրենի կարոտն ու իր ապագան
Դնձ տանջում էին, թե քուն, թե արթուն.
Եվ ինչո՞ւ պիտի ուսելու համար,
Չվեխնք դեպի հեռավոր ափելը,
Ինչո՞ւ երկիրն իմ շունենար հնար,
Իր որդիներին իր զրկում կրթել:
Միշտ հեռու հեռվից աշքերիս առաջ
Գալիս էր, կանգնում լցարը Արարատ,
Որ ամսի սև շախ ուսերին առած
Թախծում էր վհատ...
Չէ՞ որ ես այնտեղ, նրա գագաթին,
Ուխտ էի արել, սրբազնն երդում,
Ծառայել անլույս իմ ժողովրդին,
Որ տգիտության մեջ էր խարխափում.
Սակայն մոլեռանդ ողիք խավարի
Ծածկում էին միշտ լուսը արեի...
«Նախաշավիլս» կղերը այրեց գավիթում վանքի...
Իսկ «Վերքս» հապա՞ . «Վերք Հայաստանին»,
Որին տվել եմ արյունը սրտիս
Ու լույսն աշքերիս,
Վերքս շղտավ իր սպեղանին...
Գիշեր է, խավար... Սենյակում՝ նստած մտորում եմ լուռ...
Այս լուսիցունը ծանր է, ինչպես մա՞,
Մտորումներս՝ դառնաղի աղբյուր...
Խավարի հայացքն իմ լուսամուտի ապակիներից ընկել է սենյակ
Ուզում է խլել պրիչն իմ ձեռքից
Եվ երազներս անել ոտնատակ:
Բոնցքվում է իմ դայրույթը ահա,
Ես կփշրեի այս ապակու պես, խավարն ահավոր, թե լիներ հնար,
Բայց չեմ խոնարհվի ես նրա առաջ,

Կկանգնեմ հոգուս խոյանքներով լույս,
Զիա ինձ համար այլիս նահանջ...

Վարագույրները իշնում են, նման սև դրոշների.

Անլուր կորստից հանդիսականն է այնտեղ քարացած,
Եվ ես երկու շիթ արցունք աշքերիս
Իշնում եմ բեմից Աբովյան փողոց...

Փողոցն Աբովյան...

Եվ նա' էլ, նա' էլ հաճախ անցել է այս նույն փողոցով,
Բայց տեսել միայն վշտից խարխլած, անլուր խրճիթներ,
Եվ սրտի մեծ ծով՝

Դառնորին թախծել...

Աբովյան փողոց... Գիշեր է խաղաղ...

Լույսերի հեղեղ...

Եվ սաղարթների անուշիկ շրջուն,

Մարդիկ ննջել են հանգիստ, փառահեղ,

Բարձր շենքերի բազմահարկերում...

Ու թվում է, թե ի՞մն է դարունն ու իրողոցն այս շքեղ,

Հարազատներս են վաստակած ննջել շենքերում վսեմ,

Եվ նույնիսկ կապույտ երկինքն աստղաղարդ

Ինքս եմ հյուսել...

Ի՞նչ երջանկություն... Ահա' նա... ահա, կարծես, չի կորել...

Ու բեմից իշած, նա էլ ինձ նման այստեղ է եկել:

Եվ ես կարստով փարվում եմ նրան,

Բայց նա կանգնած է որպես հուշարձան...

Ուր հավերժական երկինքն աստղաղարդ,

Գլխին կապել է փառքի վառ պսակ:

Ի՞նչ երջանկություն... Հանկարծ մեր շուրջը, այնպես բաղձալի

Որպես խինդ ու սեր,

Որպես լույս բախտի բարեբեր անձուն,

Մաղում է խաղաղ հաղթերով վսեմ իմ վերածնված հայոց աշխարհին

Ել սիրոս լցված խնդությամբ անհուն
Նրան եմ դիմում.

— Արի, մենք իշնենք մի քիչ էլ ներքե,
Պայծառության մեջ հրապարակի,
Մոր խոյացել է լույս երկինքն ի վեր
Իր բիբերի մեջ հուրը գալիքի,
Նա՛, որ բաց արեց աշքերն աշխարհի,
Ել սրտում վառեց հուրն ազատության, հուրը արևի,
Նա՛, որ մեր հայոց վերքեղը բուժեց,
Նա՛, որ կոլստից քեզ կյանքի կոչեց,
Նա՛, որ մեզ տվեց երազանք, թեեր...
Ել մենք ենում ենք հիմա աշխաւճով
Կոմունիզմի լույս սահնդուխքներն ի վեր:

-○-

Հ Ա Յ Թ Ե Ն Ի Ք Ի Ա

Ես պատանի եմ ցնծուն, կոմերիո եմ խանդավառ
Ու իմ սրտում բոլորի երջանկություն է անմար,
Ապրում եմ ևս այս շքնաղ Ստալինյան մեր դարում
Եվ իմ հոգու հույզերից իմ վառ երգերն եմ դրում:

Քեզ եմ երգում, ի՞մ անդին, ի՞մ աննման հայրենիք,
Դու լույս կյանքի օրորան, հավետ կանդուն, անառիկ,
Ար շողշողում ես այսօր որպես պայծառ մի արե,
Որ պիտ շողաս միշտ պայծառ, անվերջ դարեր ու դարեր:

Երբ անցնում եմ ևս այսօր քո տփերով լուսավառ,
Ուր միշտ վարդերն են ժպտում ու խնդությունն է անմար,
Ուր երգերն են զրնդում հավերժական բերկրանքի,
Ուր զավակներդ են երգում լցված խինդով մեր կյանքի,

Եվ ուր ամենքը մեկտեղ կոմունիզմ են կառուցում,
Որ մեր կյանքը ավելի դառնա ուրախ ու ցնծուն,
Ե, լցվում է անսահման հիացմունքով իմ հոգին
Դեպ օրերդ երջանիկ, դեպի կյանքը կաթողին:

Խորհում եմ, թե էլ չկա այս աշխարհում քեզ նման,
Լոկ այդ դու ես բարձր ու մեծ, դու ես աղտա, անսահման,
Եվ քո դրկում է միայն պահված կյանքը միշտ անմար,
Որին տենչում են այսօր մարդն ու աշխարհը արար:

Ի՞մ հայրենիք, զու իմ մայր, կյանքի միակ օրորան,
Քեզ եմ ահա ևս երգում իմ երգերով հուրհրան,
Եվ կուզեի ես երգել քո ամեն թուփ, ամեն քար,
Եվ ժամանակը անմեռ երգս տաներ դարեղար:

ԵՐԿՈՒ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայրս ծնվեց անլույս, անհույս, դառնաժպիտ այն աշխարհում,
Որպես ծաղիկ ճամբաների, սմբակների խղճովկ կոխան,
Ու կարիքից հացի կարոտ աշքն էր նրանց դռան պահում:
Գիշերներին, մութ խրճիթում մահ էր երգում խենթ սատանան:

Տանում, բերում էր հոգնատանց վանից-Թավրիզ, Թավրիզից-Վան-
Աղաների արծաթաշուք քենները ճոխ զոր ու գիշեր,
Դրսում զլիսին ավազակի սուրն էր փայլում եղեռնական,
Տանը աղան էր մտրակում, եթե բեռը ուշ հասցներ:

2.

Ես ծնվեցի լույսի, հույսի արևորդի այս աշխարհում,
Արյունաշուք մրրիկ տեսած ընտանիքում մի քրդական
Ու ասում եմ զլիսիս վերև մեծ իլիչի լամպն էր ժպտում,
Ու լուսինն էր ապուշ կտրել նրա լույսից արեգական:

Ես կյանք մտա հոգիս աղատ՝ վրան համբույրը արևի,
Կանչում էր ինձ մորս նման կյանքը անգին հմայքներով,
Կյանքի արեն ամեն անգամ ծանոթի պես կբարեկի,
Երբ ես նրան սիրոտ բացեմ մշտածիծաղ իմ երգերով:

3.

Հայրս այսօր «ախ է քաշում» ջահելությունս անցավ իզուր
Բեռների տակ, ճամփաներին՝ վանից-Թավրիզ, Թավրիզից-Վան-
Դու շես կանչի ջահել տղաս՝ մրսում եմ ես, կամ թե հաց տուր,
Ինչպես որ ես՝ օտար երկրում ջահել վախտս գերի մահվան:

Ինչպես ցրտում մարդն է տենչում արեգակին սիրագորով,
Արար աշխարհն է քեզ ձգտում, նոր արևիդ հավերժական,
Ես որախ եմ, որ ծնվել եմ ու ապրում եմ քո վեհ օրով,
Իմ լույս արե, իմ սիրտ ու կյանք, իմ հայրենիք սովետական:

ՏԵՔՍՏԻԼՈՒՄ

Իլիկներն են դառնում արագ, կյանքս՝ դարուն, սիրոս երգ է,
Շուրջս դեմքեր, ձեռքեր անաշ, տվմուկն անուշ մի համերգ է,
Զայնը թափով զրնդում է կամարի տակ տեքստիլի,
Նրանք պործում ու երգում են երգը հաղար իլիկների:

Իլիկները ձեռքերի պես, թելն իրարից արագ խլում,
Փաթաթվում են ու միշտ կարծես սլահմոցի են ժիր խաղում,
Այդ կտավն է ահա քաշվում, նա մաքուր է ձյունի նման,
Մի նկար են փործում քաշել այդ կտավի հենքի վրա:

Եվ կտավն է հոսում ահա, փովում ձյունե դաշտերի պես,
Այդ իմ սիրած, զինջ աղջկա զանքն է կտավ դառնում այդպես,
Եվ իմ զահել սիրոն է հուզում բոցը նրա լույս աշքերի,
Նա մատքերն է հյուսել ուզում, ամեն տողին այդ թելերի:

Ինչպես ընդմիշտ այս ժամին էլ, աղջիկն ահա բաճկոնով գորշ,
Իլիկներն է դրել շարժի՝ տալով ընթացք պարզ ու որոշ,
Իսկ նրա պես քանի, քանի մեքենայից աշխույժ ու ժիր,
Տեմպ են տալիս սլաններին, հնդամյակի անմահ ուժին:

Վաղը կտավն այդ լուսավոր մտնի պիտի քաղաք ու գյուղ,
Որպես բանվոր այն աղջկա հյուսած նվերը սրտաբուխ,
Ուր էլ հասնի կտավը զինջ, հեռուներն էլ թե որ դնա,
Այն լուսեղեն հակի միջից այն աղջկա սերն իմանա:

Ու կտավն է քաշվում ահա, և ձյունե է տեսքը նրա,
Տեքստիլի տեսքն է նախշուն, կտավի այդ հենքի վրա,
Երբ բաժանվի դործարանից կտավը քաղաք ու գյուղ մտնի,
Ամեն բանվոր նրա վրա, հնդամյակի փառքը դանի:

Պ Ա Խ Շ Կ Ի Ն Ի Ն

Կանգնած ես դու անպարտելի ճշմարտության պատվանդանին,
Որպես փառքի մի հուշարձան դարերի մեջ հավերժացած,
Եվ հյուսած ձայնը քո ըմբոստ հավերժության վսիմ ձայնին,
Անձեռնակերտ քո բարձունքից լույս հայացքով նայում ես ցած:
Երկնել է քեզ ոռոսական մեծ ժողովրդի ոդին արի,
Տվել է քեզ նաև սիրտն իր մեծ ու տենչերը նվիրական,
Եվ առաջին երգն է հնչել ամենազոր քո քնարի.
— Ազատություն, ճշմարտություն և արշալույս երջանկության:
Հոսել ես դու ժողովրդի անհուն ու մեծ սրտի խորքից,
Ինչպես վոլգան քո հայրենի, ինչպես Դնեպրը քո վարար,
Եվ սարսել է արքունի զահն ազատաբաղ քո երգերից,
Քո լուսավոր երազներից ու խոհերից քո խանդավառ:
Բնկերացել ես դու սիրով արդարամիտ Զաադակին,
Դու միացել ես գեկաբրիստ խիզախների պայծառ ուղուն,
Չոնել ես երգը քո հպարտ կյանքին, լույսին ու արևին,
Եվ քո դաժան, դժոխ դարում ներբողել ես ազատություն:
Քո դեմ ելան ցար ու պալատ — ուժերը սև ու դավադիր,
Եվ դու բնկար, բայց չմեռար, անմահ մնաց երգդ դերով,
Եվ քո համբավը տարածվեց Ռուսաստանում անծայրածիր,
Սիրեցին քեզ ֆինն ու տունկուզ և կալմիկը՝ ստեալ սիրով:
Արդ կանդնած ես անպարտելի ճշմարտության պատվանդանին,
Որպես փառքի մի հուշարձան՝ դարերի մեջ հավերժացած,
Եվ հյուսած ձայնը քո ըմբոստ անմահության վսիմ ձայնին,
Անձեռնակերտ քո բարձունքից լույս հայացքով նայում ես ցած:

ՍՏԵՓԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

(Հոկտեմբերյան)



Մեր դաշտերում անծիր,
Բերքի ծովում այս մեր
Դառել ևս խինդ ու սեր,
Հոկտեմբերյան արև:

Մենք առույգ ենք հիմա,
Կյանքը մերն է լուսե,
Կյանքի շող ևս հյուսել,
Մեր սրտերի վրա:

Ես մի կանաչ տերեւ
Քո արկի ներքո,
Աճել, շունչ եմ տռել,
Հոկտեմբերյան արև:

ՄԻՋՈՒԹԻՆՑԱՆ ԱՅգի

Ես հիշում եմ, թիթեռի պես,
Մանուկ էի մի թուլուն,
Խաղում էի միշտ ժպտերես,
Այս կարկաչուն, զուլալ առվում:
Հիշում եմ և վայրն այն խոպան,
Որտեղ երբեք ծառ չէր աճում,
Հիմա այնտեղ միշտը ինյան
Սիրուն այդին է կանաչում:
Ինչքա՞ն պիոներ, Հռկտեմբերիկ
Երդ են տառամ այդ պերճ այգում,
Ուրախ խաղում, քաղում ծաղիկ
Եվ գեղեցիկ փնջեր կապում:
Իսկ ընկերը իմ մանկության՝
Սառնորակ ու փոքրիկ առուն
Կարկաչում է զվարթաձայն
Ու թավիշ է շորս դին սփոռում:
Փա՛ռք մեր մարդուն սովետական,
Նրա ջանքին ստեղծարաբ,
Որ դարձնում է վայրը խոպան
Միշտը ինյան այդի հալար:

— — — —

ԱՅՍ ՄԱՆՈՒԿԻ

Այս մանուկը հրաշալի
Կախարդում է իմ հոգին.
Այս մանուկը կարծես լինի
Մանկությունս խնդարդին:

Նա ցնծում է հանց վարդենի,
Փայլում, որպես ոսկի շող,
Մանուշակ է լազուրաշվի՝
Թերթին թառած արծաթ ցող:

Նա վտակի ջինջ կարկաչն է,
Նրա խաղը կենդանի
Ծիծեռնակի անուշ կանչ է,
Գեղղեղանքը՝ արտուտի:

Ահա երգով քաղել է նա
Պես-պես, զույն-զույն ծաղիկներ,
Տե՛ս, նստել է ուսի վրա
Ոսկեթևիկ մի թիթեռ:

Գոզն ու ծոցը ծաղկունքով լի,
Թիթեռն ուսին կերթա տուն,
Կարծես լինի մի կենդանի,
Փոքրամարմին բնություն:

ԶՈՀՎԱԾ ԸՆԿԵՐՈՂԸ

Դուք քո մահով կյանք բերեցիր
Ու զարուններ անապական,
Քո սխրանքով ծաղկում են արդ
Հովհանները Սովետական:

Հաղար մարդիկ ու հաղար կյանք
Ժապում են արդ աչքերով քո,
Խաղաղության շողն է փայլում
Հավերժ անմահ փառքիդ ներքո:

Մեր կառուցման այս պայքարում
Դու մեզ հետ ես քայլում նորից,
Եվ քո կոչն եմ նորից լսում
Աւելահինական լայն դաշտերից:

Այնքամ նոր կյանք, այնքան դաշտեր
Այնքան վարդեր կյանք են առել,
Ու խոսում են քո գոխարհն,
Ասում — դու կա՛ս, դու չե՛ս մեռել:

Դուք քո մահով կյանք բերեցիր
Ու դարուններ անապական,
Դու մեզ հետ ես շնչում նորից,
Մեր աշխարհում Սովետական:

ԾԱՌԱՋԻԿ

(Հատված «Ասիունասար» պահմից)

Սարի լանջին, հերկերից վեր,
Մինչև ժայռերն աճպածրար,
Փոս են փորում, տնկում ծառեր
Կոմերիտները խանդավառ:
Իսկ Հասմիկը ոգուրզած՝
Մոտենում է ամեն մեկին,
Ստուգում է ծառը տնկած,
Յույց տալիս տեղը նոր տունկի:
Եվ ամեն ժամ նրա տուած
Բացվում է նոր մի ձառուղի,
Դիտում է նա համատարած
Նոր անտառի շարքերն ուղիղ:
Նայում է նա մերթ արտերին,
Որ կորչում են այնտեղ, ցածում,
Մերթ դպրոցի խմբակների
Աշխատանքին է աշք ածում,
Որ տունկեր են բնորում վարից,
Այդիներից և անտառից:
Ու փարփում է տունկը տնկին
Ստվերներով պարանածե,
Հպարտ կանգնում լիուն կրծքին
Ոստ-ձեռքերը պարզում վերև,
Եվ ծառերի շարքի միջով
Սարալանջն է նայում անդին,

Հաղար ու մի խոհով, տենչով
Գլուխ տալիս հեռու հանդին:
Հեռու անտառն է հշմարվում,
Որ բանակ է թվում նրան,
Որ ելնում է և արշավում
Տարերքի մութ ուժի վրա,
Ու գալիս են հա շարունակ
Թփուտները, ծառերը մեծ
Եվ իր ամուր պատնեշի տակ
Ալրաներն են զարկում իրենց:

— ○ —

ԱՐԱՐԱՏ ԱՅՎԱԶՅԱՆ

Գալիս էի ևս քո այգին
Քեղնից թափում, ծեր այդեպան,
Միրում էի ևս քո այգին
Ու գեղեցիկ քո աղջկան:

Երբ որ կոխվ ևս զնացի
Պահած սերը իմ թովշական,
Հեռվից այդիդ երաղեցի
Եվ գեղեցիկ քո աղջկան:

Թշնամու դեմ չար ու անգութ
Մարտ մղեցի հերոսական,
Որ շտիրեր կանաչ այգուդ
Ու գեղեցիկ քո աղջկան:

Հաղթանակով տուն եմ եկել,
Տալիս ես ինձ դու հայրական
Համբյուր, ժպիտ, դինի, մրգիւ
Ու իմ երազ քո աղջկան:

ՇՄԱՎՈՆ ԹՈՐՈՍՅԱՆ

(Լենինական)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

(Հայքական)

Ս Ե Ր Մ Ն Ա. Ց Ա. Ն

(Հորս՝ սերմնացան Առաջելին)

Երկունքի խինդով երկինքն է լացել,
Եվ, որպես ժպիտ կապել ծիածան,
Դաշտերը թավշե վերմակ են բացել,
Բազուկիդ դալա՛ր մնա, սերմնացան:

Անոշ հմայքով հոգիս են դյութում
Կանաչ արտերը երդով թովշական,
Անծիր դաշտերդ բերքով են շնչում,
Բազուկիդ դալա՛ր մնա, սերմնացան:

Արտերիդ տոաշ իմ սիրոն է լացվել,
Հոգիս լցվել է բերկրանքով անծայր,
Իմ սրտում երդի, սերմեր ես ցանել,
Բազուկիդ դալա՛ր մնա, սերմնացան:

— ○ —

ԽԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Կիրովական)

ԽՆԴՐԻԹՅՈՒՆ

Ժողովրդի լուսապայծառ
Երջանկության տոնին է այսօր,
Այս հանդեսը, այս խինուն տնծալը,
Հայրենիք իմ, քո'նն է այսօր:

Քո'նն է մեր բորբ սիրուր հպարտ,
Քո'նն է ուժը մեր ծեռքերի,
Քո սիրով է հնչում զվարթ
Անոշ ձայնը մեր երդերի:

Խոր հրճվանքի, գարուն կյանքի,
Հաղթանակի տոնին է այսօր,
Քեզ ընծայած նվերն անդին
Իմ սրտաբուխ ձռնին է այսօր:

- ○ -

ԳՈՒՐԳԵՆ Ա.ԴԱՄՅԱՆ

(Գորիս)

ՆՎԵՐ ՀԵԳԱՄՅԱԿԻՆ

— Ինչ տամ ես նյիր
Այդ հնդամյակին,
Որ օդնած լինեմ
Մեր հայրենիքին:

Այսպէս էր ասում
Սուրիկը փոքրիկ,
Տանը, դպրոցում.
Ընկերոջ մոտիկ:

Այդ երբ իմացավ,
Զոկատավարը,
Նրան մոտեցավ,
Գտած հնարը:

— Գիտե՞ս դու, Սուրիկ,
Լավ ես սովորում,
Ասես մի մարտիկ
Լինես մեր զոկում:

Ամբողջ մի տարի
Դպրոց ես դալիս,
Եկավ «Հինգերի»
Հաշվելու ամիս:

Երբ փոխադրվես
Հաջորդ դասաբան,
Քո ծնողներն էի
Շատ կուրախանան:

Դու կարժանանաս
Դպրոցի պատվին,
Այդ նվեր կտաս
Մեր հնդամյակին:

—————

ՄԵՍԱԿԱՍՆ ԹԱՐՅԱՆ

ՅՈՒԹՈՒԹՅՈՒՆ ԽԱՅԱ



Կուղեմ երդիս ամեն տողը

Քո տուֆաշեն շարը լինի,

Ու սրտաբուխ իմ ներբողը

Քո տուֆաշեն շարը լինի,

Ամեն բառս լիահնչուն,

Շոնդալից օրերի հետ,

Աշխարհաշեն քո կառուցման

Գովքը երդող լարը լինի:

- ○ -

ԵՆԴՐՈՅ ԳԵՂԵՌՆՅԱՆ

(Էջմիածին)

ՀԱՅՈՒԹԻՒՆ ՍԱՀԱՅՈՒԹԻՒՆ
(աւտորական)

Ս Պ Ա Ս Ո Կ Մ

Գարո՞ւն, ես քո գալուն էի միշտ սպասում,
Սպասում էի ես ծիծառի ձայնին,
Որ արտս ծլի, դառնա ամոանն հասուն,
Ու զրնդա երգը իմ կոմբայնի:

Եվ դո՞ւ, գարո՞ւն, եկար ծաղիկներով,
Եկար ջրերով հորդ, խենթ ու վարար,
Եվ արտն իմ ծլեց ու կանաչեց, սիրով
Համբուրում են հողից նոր ծիլերը իրար:

Բարձր բերքի ջահճ օղակավարն եմ ես
Եվ ուզում եմ արտս լինի բեղուն,
Որ վաղն իմ օղակով դուրս դամ հանդիս,
Հաղթության դրոշով, փառքով շողուն:

Եվ կլինի բերքը վաղը առատ, գիտեմ,
Ու ես ջերմ կարոտով կելնեմ հնձի,
Առատության ծովը կալեկոծվի իմ դեմ,
Փույթ չէ, արտիին դեմքս ոլիտի խանձի:

— ○ —

ԱԲՈՎՅԱՆԻ ՏՈՒՆԸ

Այստեղ է ծնվել ու մեծացել նա՝
Հայոց վերքերի երգիչը անմեռ,
Քնել է նա այս օրոցքում փայտաւ,
Առ կայի փարշով նա ջոր է խմել:
Ու մութ գիշերներն երկար ժամերով
Նստել է բակում, բարզու տակ դալար,
Նաւել աստղալից երկնքին զերող
Ու երազել է անվերջ, անդադար...
Ասցա ելել է նա Մասիսն ի վեր՝
Հայացքը հառած լուսե հավերժին,
Եվ այնտեղ Մասսի դադարին ուխտել
Աղպին տալ կյանքը ու շունչը վերջին:
Հետո Դորովատից նա տուն է ելել
Բուժելու իր մոր վերքերն արնաքամ,
Խավարը հադած վանական սքեմ
Փակել է նրա ճամփեքը սակայն:
Եվ նա տեսավ լոկ, որ իր մոր զլիսին
Աախվել է օրհաս մութ, աղետալի,
Եվ սրով դինեց նա իր հերոսին
Բնդդեմ բանության, բնդդեմ օտարի:
Նա կործանումից փրկեց մեր լեզուն,
Միսրության ոզին վառեց նա մեր մեջ,
Նրա էռթյան ամեն մի հյուլեն
Հյուսիսի սլայծառ լույսով սլովվեց:

Բայց նա մենակ էր, մենակ ու անօդ,
Եվ նրան հույսն էր օրեցօր լրում,
Երգու նրա մեջ վիրք դարձավ, մորմոք,
Դորակատյան հուշերն՝ փշեր իր հոգում:
Եվ ապրիլյան մի առավոտ ծեղին,
Թողած ձեռագրեր, գրքեր կիսավարու,
Թողած սիրասուն իր զավակներին
Եվ կյանքի բնիեր կնոջը թողած
Դուրս եկավ տնից.—

Հետո նա թաքռն

Ինքնասպա՞ն եղավ, Զանգուն նետվե՞ց բիւ,-
Թէ նորից գերեց Մասիսը նրան,
Կամ սև կառեթով քշեցին Սիրիր:
Ոչինչ հայտնի չէ:

Բայց եթե նույնիսկ

Երկրի երեսին շիրիմ չունենա,
Քանի հնչում է մեր քայլցր լեզուն,
Աբովյանը միշտ անմահ կմնա:

1948 թ. մարտի 25-
Քանաքեռ

— ○ —

ԱՐՏՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Արքիկ)

Հ Ի Շ Ո Ւ Մ Ե Ս . . .

Հիշում ես, ցուրտ էր, հունվարյան դիշեր,
Մենք կովի ելանք անվախ ու անահ,
Հիշում ես, ձյուն էր, նոր տարվա դիշեր,
Ես ընկած էի դիրքերի վրա:

Թշնամին անցավ սև ամպի նման,
Փախավ գողի պես՝ դիրքերը թողած,
Ես ընկած էի դիրքերի վրա,
Հայրենի հողը շուրջերիս սեղմած:

Թշնամու նետած արկը մահաբեր
Խամրել էր ուղում ելանքս արևելա...
Հիշում ես, ցուրտ էր, նոր տարվա դիշեր,
Երբ դու ինձ գտար դիրքերի վրա:

Քնքույշ ձեռքերով վերքս կապեցիր,
Եվ ինձ ասացիր, թէ ոչինչ չկա,
Դու նորից կապրես, զինվոր իմ արի,
Նորից կկարնդնես դիրքերի վրա:

Նոր տարին բերեց մեղ կյանք ու տրե,
Ու ես ապրեցի դիրքերի վրա...
Հիշում ես, ցուրտ էր, նոր տարվա դիշեր,
Երբ կովի ելանք անվախ ու անահ:

ՇԻՐԱԿԻ ԱՐՏՈՒՄ

Արտերն են ծփում աշքերիս տոաջ,

Արտերը բեղուն, անծայր Շիրակի.

Իսկ շուրջու խոտեր. ծաղիկներ կանաչ,

Հասկեր ոսկեվառ կարմիր ցորենի:

Ուզում եմ այնպես գդվել մայր հողին,

Սելամանել այստեղ հույզերս բոլոր

Եվ իմ երգի հետ առնել գերանդին.

Դառնալ դաշտերում որպես մի հնձիվոր:

Որ իմ խանդավառ ջահել հոգու մեջ,

Խնչպես փոթորկվող ալիքը ծովի,

Բարձրանալ կրկին, բարձրանա անովիրջ

Սերը մայրական ազատ Շիրակի:

Արտերն են փովել ահա ոտքիս տակ,

Արտերը բեղուն անծայր Շիրակի,

Հասկելին են հեռում ծանր բերքի տակ,

Զնդում է երգս, խնչպես գերանդին:



ԲԱՆՎՈՐԻ ԽԻՆԴԼ

Գործից տուն դարձավ ջահել բանվորը,
Անզուսպ հրձվանքով լիցուն էր հոգին,
Ջերմաղին ժպտաց կնոջն ու մորը,
Սիրով դուրդութեց սիրուն բալիկին:

Ի՞ւշ էր պատահել նրան այդ օրը,
Այդ դեռ հայտնի չէր տանը ոչ մեկին.
— Գիտեք, — ասաց նա, իմ փորած հորը
Նավթ տվեց այսօր մեր հայրենիքին:

Սակայն չասաց նա, որ Հենց այդ օրը,
Նոր վիշկայի մոտ, հանդեսում իրենց,
Ռդջունեց իրեն իր դիրեկտորը,
Եվ արևավառ ճակատն համբուրեց:



ԻՄ ՍԻՐՈՒՆ ԱՐՏՈՒԹՅ

Արտույտը կացին դարուն է քերել,
Ու կանաչել են ծառերը դալար,
Ինձ ու քեզ էլ է նա մտաքերել,
Նայիր, ինչպես է երգում մեզ համար:

Քայց շկա արդեն ոչ մի քարակուցտ
Նստելու համար արտերում անձիր,
Դու մի նեղանա, իմ սիրուն արտույտ,
Այս դաշտապաշտպան ծառը բարձրացիր:

Մենք նոր ենք տնկել անտառն այս դալար,
Որ արտը պահի խորշակից հեռու,
Երգիր գարունը, թոփիր ծառից-ծառ,
Մեր նոր անտառում քեզ բույն հույսիր դու:



ԵՍԿԱՆԴԱՐ ՔՈՉԻՆՅԱՆ

(Ալավերդի)



«... Ես չեմ ցանկանում աշխարհն իմանա».

Լեռնոնով

Ես ցանկանում եմ աշխարհն իմանա,
թէ ինչի համար թախծել եմ անքուն,
Զափել անձանոթ, անթիվ պողոտա,
Ապրել հույզերի անհաս բռնկում:
Թող իմանան, որ ես սիրո համար
Մեր հայրենիքի վտանգի պահին
Արհամարհեցի և՛ տանջանք, և՛ մա՞
Ռւ հպարտությամբ դնացի կոխվէ:
Թող իմանան, որ իմ սիրո վերին,
Անծիր դաշտերի արտերի միջին,
Ժպտացել է միշտ իմ նամակներին,
Որ կյանքիս հուրը բնավ չհանգչի:
Ես ցանկանում եմ, աշխարհն իմանա,
թէ ինչու կովում սարսափ շղացի,
Այն ինչ ուժ էր, որ կամքս անսասան
Կոփեց, որով ես հաղթանակեցի:
Այդ ուժն անխորտակ ու ամենազոր
Հայրենի երկրի սերն էր հրակեզ,
Որ թեեր տվեց իմ սիրուն այսօր
Եվ դրանով էլ հպարտ եմ այսպես:



ՎԱՐԴԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

(Լենինական)

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Մովսեսկան ժամն է: նա նստած է տաճը:

Լուսամփոփից կանաչ լույս է հորդում:

Մոսկվայից դիկտոր կախանը

Վերջին լուրերն է հաղորդում:

«Միայն երեկ «Կալիբր» գործարանը
Հայրենիքին տվեց այսքան օգուտ,
իսկ «Հաղթանակ» կոլխոզն իր ցանքի պլանը
կատարեց ժամկետից երեք օր շուտ...»:

Դիտնականը լսում ու խորհում է խորին,

Դնելով մի վայրկյան դրիչը վար.

«Վերելքի պաթուն է համակել բոլորին,

Ռդջ երկիրն է ելել մեծ գործի համար»:

«Մաղկում է օրեցօր մեր մեծ հայրենիքը,
Օրորանը լույսի, ազատության,
Բայց պայքարում այս մեծ ի՞նչ է արել ինքը,
Որպես սովետական գիտնական»:

Հարցը տեղին է խիստ. ու որպես պատասխան,

Երեսում են նրան դիմացի պատից

Երկու գործարանի, մի բնակելի տան՝

Իր իսկ ձեռքով գծված երեք նախագիծ:

Իսկ չորրորդը, ահա, փոված է սեղանին,
Կիսատ է. այս գիշեր պետք է ավարտվի,
Շարքից դուրս պիտի գա այս թաղամասը հին,
Որ քաղաքի վսեմ տեսքը շաղարտվի:

Ու սրբազն պարտքի գիտակցությամբ համակ,
Նախագիծն է գծում նա նոր թաղամասի,
Վստահ է, կոնկուրսում կտանի հաղթանակ,
Ու հույզն է լեռնանոսմ հանց բարձրագահ Մասիս:

Լույս մանուկն է ննջել օրորոցում հանգիստ,
Մերթ նայում է նրան հայրը մտերմաբար,
Ասլա գլուխը կախ նա տքնում է կրկին,
Այդ խաղաղ մանկության վառ գալիքի համար:



Ա. Պ. ԿԵՐՆԻՆ

Հիշում եմ ես այն պահը երջանիկ,
Երբ իմ դեմ հանկարծ դու հայտնվեցիր,
Որպես հիասքանչ, վաղանցուկ տեսիլք
Ու դեղեցկության հանձար անբասիր:

Անհույս տրոմության մաշող պահերին,
Խոլ, տագնապալից ունայնության մեջ
Հնչում էր անդուլ ձայնդ քնքշագին,
Բու սկատկերն էի երազում անվերջ:

Տարիներ անցան: Հողմը շարագույժ
Ցըեց իմ նախկին երազները վառ,
Եվ ես մոռացաւ քո ձայնը քնքույշ
Ու քո երկնային հայացքը պայծառ:

Հեռու աքսորի դժնի խավարում
Անցան օրերս համրընթաց, անհույս—
Եվ անդավանանք և աններշնչում,
Անարդունք, անսեր, անկայան, անհույդ:

Հարյավ իմ հոգին խնդությամբ անծիր,
Եվ ահա կրկին դու հայտնվեցիր,
Որպես հիասքանչ վաղանցուկ տեսիլք
Ու դեղեցկության հանձար անբասիր:

Սրդ թրթում է սիրոս արբեցած,
Եվ հոգիս ունի աստված և հույսեր,
Ապրում եմ կրկին քեզնով ներշնչված,
Սիրում եմ և կյանք, և սրցունք, և սեր:

Թարգմ.՝ ՀԱՆՐԻ ԶԱՐՅԱՆ



ԵՐԲ ԽԵՂՃԸ ՀԱՆԳԻՍՏ ԶԵ...

Դեռ նոր էին նորապսակներին երջանկության բախտ ու երկար կյանք մաղթել, դեռ նոր էր Բաբկենն առաջին բաժակը դատարկում ու ձեռնամուխ էր եղել առջևը դրված տապակածից ձաշակել, երբ այնքան ախորժակով կուլ տված մսի պատառը սառեց ու մնաց կանգնած նրա կոկորդում:

Այո, պատառը պարզապես անշարժացավ նբա կոկորդում մինչդեռ տանտիրուհին, Հակոբի մայրը, պտտվելով հյուրերի շուրջը, անընդհատ խրախուսում էր նրանց.

— Կերե՞ք, ախորժակով կերեք...

Հասկանալի է, որ հենց որ պատառը սառեց Բաբկենի կոկորդում, նրա դիմումին անմիջապես հնչեց տանտիրուհու սիրալիր ձայնը.

— Բաբկեն ջան, ախր կե՛ր, է՛, ինչո՞ւ ևս էդպես նստել: Բայց ուրախությունը թույլ չէր տալիս հյուրասեր տանտիրուհուն անշարժ մնալ իր տեղում, այնպես որ նա առանց իր խոսքերի ազդեցությունը ստուգելու հեռացավ, թողնելով Բաբկենին այդպես սառած, պատառը կոկորդում կանգնած: Նա իւկը մսեց էլ բարի կնոջ խոսքը:

Ինչը գցեց Բաբկենին անդ աննախանձելի դրության մեջ, երբ նրա շորս կողմը մարդիկ ուրախ ծիծաղում, խոսում էին և ախորժակով ուտում, երբ նվազախումբն անվերջ իրար ետևից ուրախ եղանակներ էր թնդացնում:

Այդպես է պատահում այն մարդու հետ, որի խիղճը հանգիստ շի լինում, կամ ինչպես այլ կերպ տառեմ են, որի խղճի վրա ինչոր բան կա ծանրացած:

Եվ խելապես, ըստ երեսութիւն այդպես էր, որովհետեւ Բաբ-

կենի ողջ կեցվածքն ընդունեց մեղավոր արտահայտություն. գլուխ մեղապարտորեն թերվեց դեպի ցած, կոպերը խոնարհվեցին, ձախ ձեռքը տիսրորեն նեցուկ դարձավ այտին, իսկ աջով սկսեց պատառաքաղի կոթով ջղաձղորեն խաղալ սփոռցի հետ:

— Վահ Բարկեն, — այս անգամ լսեց նա ուղիղ դիմացից: Նրան դիմողը իրենց ցեխի վարիչն էր, որը թամադան էր:

Բարկենը տիսուր զլուխը բարձրացրեց:

— Ա'յ տղա, զու էղ ի՞նչ բանի ես, էս բոլորը քեզ չի բարերում, ի՞նչ ես ունքերդ կիտել:

Բոլորը աշադրությունները դարձրին դեպի նա, ու Բարկենը առաջին անգամ կարմրեց այդ մարդկանց հայացքներից, որոնց հետ ահա, արդեն համարյա երեք տարվա ընթացքում աշխատանքի մեջ շփվելով, մի ընտանիքի պես հարազատ էր դարձել:

— Ընկե՛ր Թաթոս, — խզված ձայնով խոսեց Բարկենը, գիտեք, կներեք ինձ, ես մի շատ կարևոր գործ ունեի, որը մոռացել եմ կատարել: Խնդրում եմ, ինձ մի ժամով ազատեք...

— Ա'յ տղա, գժվե՛լ ես, ինչ է, — բարկացավ Թաթոսը, հարսանեկան էս տաք սեղանը թողած, ի՞նչ գործ, ի՞նչ բան...

Բայց մեր հերոսի տեսքն այնքան արտահայտիչ էր և խոսքին այնքան համոզիչ, որ նրան բաց թողին:

— Ա'յ տղա, գժվե՛լ ես ի՞նչ է:

Բարկենը դուրս եկավ փողոց, հետը տանելով մի երգի նրա լսած վերջին հնչունները՝

«Շորոր-մորոր կիշնես ցած

Մեր լեռներեն կանաչած», —

բառերի հետ:

«Ինչպե՞ս պատահեց, որ մոռացա, — խորհում էր նա, քայլելով փողոցով, — և մի՛թե թարսի նման մի այսպիսի օք պետք է մոռացած լինեի: Մեր ցեխի բոլոր բանվորներն այնտեղ հիմա քեֆ են անում, ուրախանում, իսկ ես...»:

Ու նա ջղայնացած, հետզհետե արագացնում էր իր քայլերը: Ասդա մի հակառակ միտք դանդաղեցնում էր նրա ընթացքը և վարանմունքի մեջ դցում: Բայց գուցե այդ իրե՞ն է թվում, գուցէ ինքը արել է ամեն ինչ, այնպիս ինչպես որ պետք է...

Ու Բարկենը հոնքերը խոժողելով սկսում էր կրկին ու կրկին մտարերել.

Հասավ հետեւալ պարբերությանը՝

«Ինչ վերաբերում է բուն տարածայնություններին...— երբ ո՞նկ. թաթոսը կանչեց. «Կանգնեցրե՛ք մեքենաները, այսօր մի քիչ շուտ ենք վերջացնում, պետք է քեֆի դնանք, մեքենաները մարրեւու դնացեք պատրաստվելու»:

Բարեկենը մեքենայի մոտոոր անջատեց, բաց արեց ձուլման մասը, զսպանակները թուլացրեց, տեքստը պահեց սեղանի դարակում, հետո... Հանեց աշխատանքային զողնոցը, կախեց պահաժանում ու... տուն դնաց:

Այն հանդամանքը, որ ինքը մի քանի անգամ մտաբերելուց հետո ուրիշ ոչինչ չեր կարողանում հիշել՝ ջղայնացնում էր Բարեկենին:

Նա ցանկանում էր հիշել, որ ինքը չի մոռացել անջատել նաև մեքենայի վառարանը: Բայց ոչ մի կերպ չեր կարողանում հիշողության մեջ վերականգնել այդ նպատակի համար արած իւ որևէ շարժումը:

«Չէ՛, պարզապես մոռացել եմ», արդեն հաստատորեն համոզված, ով գիտե քանի երրորդ անգամ տում էր նա ինքն իրեն:

Ու Բարեկենն ավելի էր արագացնում իր քայլերը: Բայց մի սոր միտք շփոթեցրեց նրան՝ իսկ այս ժամին ով կթողնի իրեն տպարան: Պարզ է պահակը դուռը չի բանա: Չէ՛, ինքը պահակին կխնդրի, կհամոզի... նա մտքում որոնում էր ուժեղ արտահայտություններ, որոնցով ինքը կկարողանար պահակի համառությունը կոտրել: Իսկ եթե վերջիվերջո շթողնի, ինքը ուղղակի դադանի կերպով ջրհորդանների օգնությամբ կբարձրանա ու ներս կմտնի երկրորդ հարկի պատուհանների մեջից, որոնցից մի քանիսի ասկակինները փոխարինված էին սովորաթղթով, որոնք հեշտ կարելի էր պոկել:

Այս խորհրդածությունների մեջ Բարեկենը հասավ տպարան:

— Օ՛, կերած-խմածդդ անուշ, խեր լինի, ինչո՞ւ ես քեֆդ կիսատ թողել, — զարմացած դուռը բաց արեց պահակը:

— Հովակիմ բիծա, աշխատանքը վերջացնելուց հետո մոռացել եմ մեքենայիս պլիտան անջտել, հիմա շատ եմ խընդուռում ցեխի դուռը բաց անես:

— Դու դրա համար քեֆդ թողել եկե՛լ ես, — զարմացուի

պահապանը,— է՛, մոռացել ես-մոռացել, ի՞նչ կա որ... ցեխի
հոսանքը ևս ոռւթիւնիկի մոտից անջատել եմ:

— Զէ՛, Հովակիմ բիծա, ոռւթիւնիկն իրա հերթին, մեքենան
իշա: Այս առավոտյան հավաքարարը կդա, ոռւթիւնիկը կմիաց-
նի, մեքենան էլ կմիանա...

— Է՛ ինչ կա որ, թող մեքենան էլ մի ժամ շուտ միանա,
դրանից մի վատ բան չի լինի:

Բայց Բաբկենը չէր համոզվում և շարունակում էր պնդել:
Ծերունին, որ ողջ տպարանում հայտնի էր իր համառու-
թյամբ, ի վերջո ջղայնացավ.

— Ախափե՛ր, դնա բանիդ ևս էս կես-գիշերին դատարկ բանի
համար ցեխի դուռը բաց անող չեմ: Գնա, ցեխի վարիչից թուլ-
տրվության թուղթ բեր, կրանամ:

Բաբկենը հուսահատ ու դլխիկոր վերադարձավ: Այսուղ, տե-
ղում նա համոզվեց, որ պատուհանից ներս մտնելը բոլորովին ան-
հրնարին է:

— Է՛ջ, կդնամ, ընկ. Թաթոսին կասեմ,— վերադարձին մը-
տածում էր նա:

Այն բանից, որ մեքենան միացված է թողել, նա գիտեր, որ
առանձնապես ոչ մի վատ բան չի պատահի: Բայց դա մի տեսակ
ծանրացել էր նրա խղճի վրա և ինչքան էլ որ աշխատում էր, չէր
կարողանում շմտածել այդ մասին:

Մանավանդ նշան ջղայնացնում էր այն տեսարանը, որ ըստ
երեսութին պիտի պատահեր ցեխում երկուշաբթի օրը առավոտ-
յան: Հավաքարարուհին, որին տպարանում ամենքը «մայրիկ»
էին անվանում, ցեխի՝ Բաբկենից ամենից ավելի հեռու անկյու-
նում մի պահ աշխատանքը դադարեցնելով, իբր թե իմիշիալուց
պիտի բացականչեր.

— Հա՛, Բաբկեն ջան, դու մեքենադ անջատել մոռացել էիր,
բա թագա կոմսոմոլը էղպես կանի:

Ու հետն էլ ներողամիտ կժպտար:

Ճիշտ այդպես մի քանի օր առաջ ամբողջ ցեխում լսելի ձայ-
նով նա հանդիմանեց Արաքսիալին:

— Ի՞մ, աղջի՛, էղուց մյուս օրը ուզում ես ամուսնանալ ու
իսկի քու մեքենայի տառերը կարգին չես կարում պահել: Երկու

Հաստ գլխատառ զետնից զոտա: Բայ զու ինչպես ևս տուն կառավարելու:

— Եղ կնիկն էլ... դժգոհ մտածում էր մեր հերոսը, — իրեն շհասած գործերի մեջ է խառնվում...

Երբ Բարեկենը ներս մտավ, քեֆը արդեն, ինչպես ասում են, կարգին թեժացել էր:

Նվազում էին պարի եղանակ ու քեֆ անողներն իրար կտրելով, մեկը մյուսի ետևից վեր էին կենում պարելու:

Բարեկենի ներս մտնելուց մի քիչ հետո պարը դադարեց ու ցույրը նստեցին կեր ու խումբ շարունակելու:

— Լավ ժամանակին եկար Բարեկե՞ն, — բացականչեց Թաթոսը, — Հենց հիմա հերթը հասել էր քո կենացը խմելու: Լցրեք բաժակները...

Ներս մտնելիս Բարեկենը մտածում էր անմիջապես Թաթոսին պատմել ամեն բան և իրավունք խնդրել, պահակին ներկայացնելու համար, բայց անմիջապես թամադացի հրամայական տանին ենթարկվելով, նստեց:

— Հարգելի ընկերներ, — սկսեց Թաթոսը, — խմում ենք բաւորիս սիրելի Բարեկենի կենացը...

Բարեկենը ամաչած գլուխը խոնարհեց:

— ... Նա օրինակելի աշխատող է...

Բարեկենն անհանգիստ շարժվեց տեղում:

— ... Լավ տիրապետում է իր գործին, համեստ է, խելացի: Գրագետ...

Բարեկենն անընդհատ ցանկություն էր զգում ընդհատելու Թաթոսին և հայտնելու, որ ճիշտ շին նրա ասածները, որ ինքը արծանի չէ այդ գովասանքներին, բայց մեքենաբար մնացել էր տեղում անշարժ:

— ... Բայց ընկերներ, Բարեկենն իր սքանչելի հատկությունների հետ ունի մի բանի փոքր թերություններ: Նա մի փոքր թափթը փափած է...

Բարեկենն ուզեց բացականշել «Ճիշտ է», բայց բառը խզվեց նրա կոկորդում:

— ... Օրինակ, այսօր աշխատանքից հետո նա մոռացել էր

մեքենայի վառարանը անջատել. դա խոշոր հանցանք չէ, բայց
ցուց է տալիս, որ Բաբկենը պետք եղածի շափ ուշադիր չէ դե-
պի աշխատանքը: Ես ինքս անջատեցի մեքենան:

— Ընկեր Թաթոս, — բացականշեց Բաբկենը, — կարծես նրա
սրտի վրայից մի ծանրություն ընկավ, եթե սեղանը Ահներ, նու
հավանաբար կնետվեր թամադայի գիրկը:

— Ընկե՛ր Թաթոս, — նորից բացականշեց նա և միանգամից
կարծես այդ վայրկյանից նա իրեն գտավ քեֆի շրջապատում:
Խելահեղ ուրախությամբ նա վեր թռավ տեղից և դառնալով նվա-
գողներին, գոշեց:

— Մի պարի եղանակ, արագ պարի եղանակ...

Բաբկենն իրեն զգում էր զարմանալի թեթև: Նրա խիղճը էլ
չէր տանջում: Նրա համար հասկանալի էր շրջապատի ուրա-
խությունը, նրան սիրելի էին և նորապսակները, և թամադան՝ ցե-
խի. վարիշը Թաթոսը, և «մայրիկը», որի հայացքին համարձակ ու
վստահ պիտի հանդիպեր նա երկուշաբթի օրը:

Եվ խելահեղորեն պարելով, նա գոշում էր.

— Արա՛դ, ավելի՛ արագ...



ԿՈՒԽԱԶԱՑԻՆ ԱՌՈՒՅՆԱ

Հրապուցրներով է բացվում հունիսյան առավոտը Արարատյան դաշտում: Արեելքի շառագունման հետ Արագածի վրա խամրում է լուսնեղջյուրը, իսկ աստղերը հաղիվ ցոլցլում են երկնքում և ընդարձակ դաշտը պատաժ խաղողի այգեների թմբերի միջն ծովացած ջրերում: Անէանում է վաղորդյան ծշուշը: Ամենուրեք նշմարվում է ծառերը, ծաղիկները, խոտերը պատաժ ցողը, որ բոցկլուսում է մարգարտի նման: Շրջապատում տարածվում է նորաբաց փշատենիների ծաղիկների բույրը, մեղմ զեփյուտից սվավում են բարձրակատար բարդիները:

Վաղորդյան այդ գեղեցիկ պահերին դաշտ ու այգի են դուրս գալիս Արարատյան դաշտի կոլխոզնիկները: Նրանց մեջ է և եշմիածնի շաջանի Միկոյանի անվան կոլխոզի կոլխոզնիկունի Աստղիկ Խաչառյանը: Անհուն խնդությամբ համակված, նա ոտք դրեց իր օղակին մշակության հանձնված բամբակենու դաշտում: Հենց այդ ժամանակ էլ նրա օղակի անդամ Շաղիկ Սևոյանը բաց թողեց ջուրը բամբակենու ուղիղ շարքերի միջով, և արևի առաջին ճառագայթները սկսեցին խաղալ շարքերում հորձանք տվող ջրերի արծաթաշող ժապավենների հետ:

Աստղիկ Խաչառյանը թեև անցած երեկոյան էր դուրս եկել այդ դաշտերից, բայց նորից աշք ածեց, ուշադիր դիտեց բամբակենու մատղաշ բույսերը: Նրանք դեռ երկու, երեք տերեներով են, մեկ թիզից էլ ցածր: Բայց ահա, փորձառու բամբակագործի աշքերից չվրիպեցին շատ ու շատ բույսերի վրա այս առավոտյան առաջին անգամ երեացող չորրորդ տերենները: Եվ նա իր օղակի անդամների հետ սկսեց քաղհանի ու փիրեցման աշխատանքները:

Հունիսյան այս հրապուրիշ առավոտյան Արարատյան դաշտավայրում Աստղիկ հաշատրյանի նման իրենց աշխատանքներն սկսեցին բամբակագործ հաղարավոր օղակներ։ Նրանք աճեցնուան առատ բերք։ Նրանց ոգեշնչում է միայն աշխատանքը, սոցիալիստական դաշտերում կատարվող հանրօգուած աշխատանքը։ Այժմ, երկտերե, եռատերե ու քառատերե այս բուլսերին խնամելով ու աճեցնելով, նրանք մտքով թոշում են դեպի աշուն և նրանց առջև երեսում են դեպի պետական պահեստներն ուղղված հաղարավոր ավտոմեքենաներն ու սայլերը՝ բեռնավորված ձյունաթույր բամբակով... Երեսում է բարիքներով լցված իրենց տունը։

Այս ծերունին, որ յոթանասուն հունիս է ապրել և դեռ կորովով ու ավյունով են լեցուն նրա կոները, Միկոյանի անվան կոլխոզի անվանի խաղողագործներից է։ Զնայած պատկառելի տարիքին, նա երիտասարդի աշխուժությամբ է համակված և երիտասարդական ավյունով էլ աշխատում է։ Ահա, նա այսու թմբերը փորել է, այնտեղ չի թողել ոչ մի մոլախոտ ու միայն կանաչած վաղերն են թարմ բուսահողի վրա օրորվում մեղմ հովից։ Նա դադար չունի, ժրացան մեղվի նման անընդհատ գործողության մեջ է, ասես շունչ է տալիս հողին։ Երբ խոնարհվում է վաղերի վրա, նրա կրծքին արևի առաջին շողերի տակ ժպտում է իլյիշը և բարձր բերքի համար դեռևս տասը տարի առաջ Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում ստացած Ռոկե մեդալը։

Ապա նա աշխուժով պատմում է, թե ինչպես անցյալ տարի կոլխոզում ամենից բարձր բերք իր օղակի այգիներից հավաքեցին։

— Այս տարի ավելին կստանամ, խոսք եմ տվել, 1950 թվին նորից Ռոկե մեդալ պետք է ստանամ Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում։

— Ինչպես են բերքի նախանշանները, — հարցնում են նրան։

Նա չի պատասխանում, այլ մատնացույց է անում թումբը

պատած վաղերը, որոնց վրա ողկույզները խիտ-խիտ ու առաջ արդեն աշքի են ընկնում:

— Արդեն ծաղկում են, — ասում է նա:

Ու զգացվում է, թե ինչպես նա վառ հավատով նայում է խիտ աճած ողկույզներին, որոնք ամիսներ հետո նրա քրտնաշան աշխատանքով, արևի ջերմ շնչով և հողի անթեղած ուժով քաղցրահամ խաղող են դառնալու, ժպտալու այս դեղուղեց որթատունկերից կախված:

— Նուրիջա'ն, այս թմբերին ոնց որ լավ չսրսկեցիր, հը՝ — կանչում է Ավետիս Հարությունյանը:

Նրա խուզարկու հայացքից շվրիպեց խաղողենին բորդոյան հեղուկով սրսկելու գործում կոլխոզնիկ Նուրիջան Պետրոսյանի թերացումը և ստիպեց նրան նորից սրսկել:

— Էա'վ սրսկիր, ա'յ տղա, որ ոչ մի վնասատու շմոտենա խաղողին, — ասում է այգեգործը:

Արևի առաջին ճառագայթների տակ որթատունկերի կանաչ տերևների ու մատղաշ ողկույզների վրա ծիածանվում է բորդոյան հեղուկը:

Այս առավոտ ամբողջ Արարատյան կաշտավայրում հաղարավոր խաղողագործներ այսպես սկսեցին իրենց աշխատանքը՝ հայացքներում երազանք ու վաղվա օրվա նկատմամբ վառ համար:



Օծանելիքի խանութ մտնելիս, ընթերցող դու այնպիսի սքանչելի բույր չես զգում, ինչպես հոմիւյան այս հրապուրիչ առավոտյան Միկոյանի անվան կոլխոզի կոլխոզնիկներն զգացին խորդենու պլանտացիաներում...

Արդեն ընդարձակ պլանտացիաներում և հարյուրավոր քայլ հեռվում էլ նստել է անուշահոտությունը: Ինչքա՞ն հաճելի է այստեղ: Պոկում ես մի տերև և զգում, որ ոչ մի օծանելիքի սըրվակ քիզ այդ բավականությունը չի պատճառում:

Բրիգադիր Մարիամ Եղիազարյանի ձեռքին մի փոքրիկ բրոցուր կար՝ «Ղազանլիկյան վարդի մշակությունը» խորագրով: Երբ հետաքրքրվեցին, նա պատասխանեց.

— Ղազանլիկյան վարդը պետության համար տվելի թան-

կարժեք է: Եռատով մեզ պլան են իջեցնելու, կլիման համապատասխան է: Ռւսումնասիրում են մշակության կանոնները:

Երջում ես ողջ Արարատյան դաշտում: Ամենուրեք եռում է համայնական աշխատանքը: Տասնյակ ՄՏ կայանների հարյուրավոր տրակտորներ հռնդում են ամենուրեք և հերկ ու մշակություն կատարում, հարյուրավոր ավտոմեքենաներ հանքային ու տեղական պարարտանյութեր են տեղափոխում դաշտերը, Ստալինի անվան, Ստորին Զանգվի և շատ ուրիշ ջրանցքներ ի րենց ջրոսոգիչ խիտ ցանցով սնում են ցանքերն ու այգիները, աճեցնում խաղողը, բամբակը, պտուղը, խորդենին: Բնդարձակ դաշտում առանձին շերտեր են բռնել նորատունկ անտառագոտիները, հերկած առվույտը բուրում է, կորնգանի կարմրերանգ ծաղիկների վրա բզզում են մեղուները և մեղուահյութ առնում: Հաղարավոր նորակառուց բնակարաններ, հանրային շենքեր, կուտարայի օջախներ, աղբյուր-հուշարձաններ, դպրոցներ բռնում են արարատյան դաշտավայրի բարեկեցիկ ավանները: Ահա, նայեցեք Միկոյանի անվան կոլխոզի նորակառուց, հինգ միլիոն ոռուի արժողությամբ ակումբին, որի միայն ֆասադի գեղեցիկ սյուների, կամարների ու խոյաքանդակների վրա երկու քանդակործ, տասնյակ որմնադիր վարպետներ են աշխատում: Ե՞րբ է Արարատյան դաշտը նման հոյակապ պալատներ ունեցել, պալատներ, որտեղ հայ աշխատավորը հոգեպարար սնունդ է ստանում աշխատանքի ու ստեղծագործության համար:

Այս առավոտ ինչքան հրապուրիչ է կյանքն այստեղ, Արարատյան դաշտավայրում: Բերկրանքով լեցուն, մարդ ակամա հիշում է մեծ վիպասանի մոայլ տողերը այս թովշական դաշտի մասին, որ տսել է շուրջ յոթանասուն տարի առաջ. «Արարատյան դաշտում շկար հնձվորը, շկար հերկվորը: Հասունացած արտը մնացել էր կիսաքաղ, արորը անգործ ընկած էր դեռ շվերջացրած ակոսների մոտ, այգիները մնացել էին անխնամ»:

Իսկ քանի՞-քանի դարեր է այսպես եղել...

Անհետ կորել են այդ ժամանակները: Այժմ մեր ժամանակ-

ներն են, սովետական ժամանակները։ Այս ընդարձակ դաշտում՝
մեր հայրենի ոստանում, ամենուրեք աշխատանքային հեր ու
ստեղծագործություն է։ Նորությունն է բուրում սոցիալիստական
այս դաշտերում։ Նոր, սովետական մարդիկ, զինված հայրենական
հղոր տեխնիկայով, ելել են արշավի հաղթելու բնությանը, ոչ թե
նրանից մուրալու, այլ նրան ստիպելու տալ այն, ինչ ունի ան-
թեղած իր անհատակ գրկում։ Նրանց, սովետական մարդկանց
նաև հրավառում է երաղայինը, հեռանկարայինը։ Վաղվա օրը
այս երջանիկ օրվանից ավելի գերող, ահա նրանց դեմ-հանդի-
ման։ Եվ նրանք, երբ նայում ես այս երանգավորված կոկոններին,
որոնք առատ բերքի նախանշաններ են, այս ծաղկափթիք
այգիներին ու դաշտերին, լիաթոք շնչում են ու գոհանում այն
մտքից, որ այսպես լիառատ է վարձատրվում իրենց աշխատանքը։
Եվ ամեն անդամ, երբ անցնում են իրենց գյուղերում ու քաղաք-
ներում հոյակապ պատվանդանների վրա կանգնած մեծ առաջ-
նորդների արձանների մոտով, ամբողջ էությամբ շշնչում են՝

— Դո՞ւք բերեցիք մեր այս շքնաղ ոստանին խաղաղ ու եր-
շանիկ կյանք, հունիսյան հրապուրիչ առավոտներ։



Ծ Ն Ն Դ Ա Վ Ա Յ Բ Ը

1.

Լուսամուտի պղտոր ապակու մեջ անդամ Սուրենը տեսնում էր իր փոխված, առնականացած դեմքը։ Այս, քթարմատից իշնող այդ երկու ակոսները չկային այն ժամանակ, երբ մեկնեց բանակ։ Եվ նա իր ոտքեղ ափով մի անգամ էլ շփեց դրանք։ Նա զոհ էր, որքա՞ն բան տեսավ, ինչպե՞ս լավ ճանաչեց աշխարհը և մարդկանց։ Նա զոհ էր, որովհետեւ հաղթած էր դառնում տուն։ Այլևս զնացքի սուլիչը չէր, որ ստիպում էր նրան դուրս նայել, ո՛չ, հայրենիքի բուրմունքն էր, որ արդեն զգում էր նա և որն այնպես լավ էր մնացել իր հիշողության մեջ՝ անդամ այնտեղ, վասողի թանձր մխի մեջ... շնայած երեք տարի էր, ինչ վերջացել էր պատերազմը։ Ահա միմյանց ետևից թոշում են հեռագրասյուները... Ճիշտ այդպես էլ թռան, սակայն ծանր թոփչքով, պատերազմի տարիները։ Նա հայացքը դցեց հեռուն, սյուների աշք հոգնեցնող թոփչքը վաղուց ձանձրացրել էր նրան... Որքա՞ն փարթամ են այն ծառերը, որոնց ծավալուն ստվերում՝ ոլորուն առվակի ափին խաղում են մանուկները... Այդ երեխաներն էլ չկային այն ժամանակի...

Ահա և նորաճ, գեղանի աղջիկների մի խումբ։ նրանք վեր բարձրացրին իրենց մրգաշատ կողովները և ողջունեցին ուղևորներին։ Առաջ մղվեց Սուրենը՝ ավելի լավ տեսնելու համար աղջիկներին։ գուցե Աստղիկն էլ նրանց մեջ էր, գուցե լսել է իր վերադրձի լուրը, բայց ինչպե՞ս, չէ՞ որ այդ մասին ինքը ոշինչ չէր զրել... Եվ նա կրկին ձգվեց առաջ, գուցե մեկը նման կլիներ

նրան... Սակայն հսկայական դաշտավայրը մի նոր, հիասքանչ տեսարան էր բացել նրա առաջ:

Հետո՞... Հետո գծագրվեց հսկա գործարանը իր ծխնելուցզնեւրով: Մոռացած ամեն ինչ՝ Սուրենը մտքով մտել էր գործարանից ներս և հետաքրքրությամբ դիտում էր յուրաքանչյուր բանվորի աշխատանքը...

— Երեա՞ն... Երեա՞ն,— միանգամից դուրս թռավ զորացըրված մի քանի տասնյակ բանակայինների շուրթերից:

Ինչ կարող էր այդ պահին ավելի հուզիչ լինել, քան այդ ձայնը...

Այո, Երեան:

Չնայած պլատֆորմից մենակ դուրս ելավ Սուրենը, այնուամենայնիվ այնքան թեթև էր քայլում նա իր ճուկավոր կոշիկներով, այնպես լավ, կարծես դիմավորող երեանցիները, որոնք այնպես ժպտաղեմ ողջունում էին, իր համար էին եկել կայարան...

Քաղաքը դիմավորեց նրան գրեաբաց. միանգամից և անսպասելի՝ նրա հոգում արթանացան բաղմաթիվ և քաղցր հիշողություններ, կապված իր մանկության և պատանեկության հետ, Աստղիկի հետ...

Դուրս դալով առաջին պողոտան, նա կանգ առավ: Այս ի՞նչ նոր փողոց էր. ոչինչ չհիշելով՝ նա սկսեց կամաց-կամաց առաջանալ: Ժամանակ շուներ այլևս ծանոթներ փնտրելու, նրա հայացքը բարձրանում և մնում էր վարդատուֆից կառուցված բազմահարկ շենքերի վրա: Եթե այսպես փոխված լինեն և՛ բոլոր փողոցները, կարո՞ղ էր նա գտնել իր Աստղիկին: Նա ջանում էր հիշել, թե այդ դիմացի շենքը, որն ասես շիկնել էր արեից, ո՞ր ցեխապատ, ցածրիկ տնակներին էր փոխարինել: Նա աշխատում էր վերհիշել և շեր հիշում, նա, որ այնքան վավ դիտեր իր ծննդավայրը...

Ավտոմեքենայի մի ուժեղ ազդանշան սթափեցրեց նրան: Քանի մոտենում էր այն թաղին, որտեղ ապրում էր Աստղիկը, այնքան սկսում էր անհանգստանալ: Նա չէր զգացել, որ անցել էր երկար ճանապարհ, սակայն միհարկանի տան չէր հանդիպել: Կանգ առավ, նայեց համարը, կրկին ետ եկավ: Ահա ա՛յս համարն է, բայց սա եռահարկ մեծ շենք է, իսկ ի՞նչ է եղել Աստղիկենց տունը: Չէ՞ որ միշտ նույն հասցեյով է ինքը նամակ գրել ոիրած աղջկան:

— Դու 45-րդ դպրոցի՝ ես, — Հարցրեց մի պատանի մյուսին,
և նրանք զրուցելով անցան:

Քառասունհինգ դպրոց՝ իսկ այն ժամանակ... Կարծես հե-
քիաթների աշխարհում լիներ, երբեկցե կմտածե՞ր նա, որ այսքան
կարճ ժամանակում այսպես կփոխվեր փոքր երեանը:

Սուրենը նոր նկատեց, որ փոխվել էր ոչ միայն Աստղիկենց
թաղը, այլև ամբողջ փողոցը: Եվ այն գույնը թռած կարմիր գըռ-
նակը, որի մոտ հանդիպում էին նրանք, և այն փոքրիկ պարտեզը՝
մանր քարե պարսպով — լոկ հիշողություն էին դառել: Բայց
Աստղիկը, նա էլ հո չէր կարող հիշողություն մնալ. պետք է գըռ-
նել... բայց ինչպես գտնել այս նոր քաղաքում... Մի միտք հան-
կարծակի ուրախացրեց նրան և նա շտապ քայլերն ուղղեց դեպի
Հասցեների սեղան:

— Հայրանունը շպիտեմ, — պատասխանեց Սուրենն աշխա-
տակցի Հարցին: — Նա քսաներեք տարեկան էր: Բայց ավելի լավ
կլինի՝ ինձ տաք բոլոր Պետրոսյան Աստղիկների հասցեները:

Աշխատակցուհին ներողամտաբար ժպտաց, նայեց զինվորա-
կանին և կարծես նրա ցանկությունը կատարած լինելու համար,
հանձնեց բոլոր հասցեները: Դրանց թիվն ուղիղ երեսունչորս էր:

Հետաքրքիր օրեր սկսվեցին Սուրենի համար: Ամբողջ մայրա-
քաղաքը ծայրից ծայր ման եկավ նա և որքան շատ էր փնտրում,
այնքան շատ էր կարոտում իր Աստղիկին, այնքան զարմանում,
հիանում էր քաղաքի վեհատեսիլ և հիասքանչ կառուցումներով:
Վեցերորդ Աստղիկն աշխատում էր ժամացուցի նորակառուց
գործարանում, գուցե հենց դա իր Աստղիկն է. կես կասկածով, կես
հույսով նա քայլում էր Արարկիրի փողոցներով: Կարծես մի նոր
փոքր քաղաք էր ծնվել երեանի փեշերին, անհամար շենքեր, հիմ-
նարկներ, դպրոցներ, զբոսավայրեր: Այս բոլորն ինչպես արագ
կատարվեց:

— Դուք ի՞նձ էիք հարցնում, — գործարանի շեմքում երեաց
թխադիմ, հազիվ 16-ամյա մի աղջիկ:

Սուրենը ձիշում է, իր Աստղիկն էլ ձիշտ այդպես էր, երբ ինքո
մեկնեց բանտեկ... բայց այժմ նա...

— Ներողություն, — ժպիտով նրան դիմեց Սուրենը, — Ես
շփոթվել եմ: Բայց գուցե կիմանաք, ձեզ մոտ ուրիշ Աստղիկ չկա:

— Կա, Առաքելյան Աստղիկ, — ասաց աղջիկը՝ նկատելով զինվորականի շփոթությունը, — Նա եկել է Հունաստանից:

— Էավ, ոչինչ, — արագ վրա բերեց երիտասարդը: — Ես այնուամենայնիվ կգտնեմ նրան:

Նա կրկին ներողություն խնդրեց և անցավ յոթերորդ Աստղիկին փնտրելու:

Օրերի հետ սկսեց նա անորոշ մի վախ զգալ, դուցե Աստղիկը բացակայում էր քաղաքից, դուցե այժմ միտիսել է իր ազգանունը:

Եվ քայլում էր նա Զանգի ափերով, ականջ դնելով զետեխորհրդավոր ու հարազատ խշոցին, անցնում էր և Ստալինյան պողոտայով՝ երկար ժամանակ շմորանալով իննամյա Աստղիկի ժպիտը... Բայց հետո կրկին անծանոթ հայացքով դիտում էր շուրջը... Որտե՞ղ էին այն ժամանակ այս հսկայական, անծայրածիր փողոցներն իրենց լվացված ասֆալտապատ հայելիներով, վարպետն շենքերով. Հապա այսքան շատ զբոսավայրերը, որքա՞ն հանգստացուցիչ են իրենց ստվերաշատ, սաղարթախիտ ծառերով:

Նախքան կհասներ նոր Աստղիկի տանը, արդեն պատկերացնում էր, թե ո՞ր ինստիտուտն ավարտած ովետք է լինի նա, կամ դպրոցի որ դասարանը: Այնուամենայնիվ նրան հետաքրքրում էին բոլոր Աստղիկները: Մի քանի օրվա զբոսանքից Սուրենը կարծես մի գյուտ արած լիներ: Որքա՞ն զեղեցիկ էին երեխաներն ու պատանիները, երբեկցե տյսպիսի սերունդ եղե՞լ էր աշխարհում, այսքան գեղեցիկ, առողջ և որքան կուլտուրական են, խելոք... Ել, հետաքրքիր է, իր Աստղիկն ինչպիսին է դարձել այժմ, հիմա, երբ նա արդեն բարձրագույն կրթություն ունի:

— Ես եմ Աստղիկ Պետրոսյանը, — դուան շեմքին կանգնեց ութսովնամյա մի կին:

Սուրենը հանկարծակիի եկավ և մոռացավ, թե ինչու համար էր գտնվում այնտեղ: Իսկ լինն այնպես էր նայում անծանոթ զինվորականին, կարծես ուզում էր ճանաշել:

— Ներողություն, տատիկ, — հազիվ շշնչաց շիկնած երիտասարդը և արագ հեռացավ:

Սյունավերջին Աստղիկն էր: Բայց Սուրենը հույսը շեր

կտրում: «Պետք է որ անպայման դտնեմ նրան», — մտածում էր Սուրենը, իջնելով նորքի փողոցներից: Նա կանգ առավ ոլորոն շուելում: Մայրամուտ էր: Այստեղից լավ էր երևում քաղաքը: Որքա՞ն ծավալում էր այն... Սակայն ի՞նչ փոշի է, որ բարձրանում է վեր, ոչ, այդ գործարանների ծուխն է, որ հասնում է երկինք, փոշի չկա... Տերեների սոսափյունը գրավեց նրան: Շրջվեց: Մատղաշ, նորածիլ ծառերի անտառ էր կանգնած իր դիմաց: Ցածից լսվում էին հարյուրավոր նոր ավտոմեքենաների և տրամվայների աղղանշանները: Ավելի հեռվում՝ կապույտ մեզը հանդարտորեն սահելով վեր, խաղաղություն էր բերում աշխույժ քաղաքին: Հետո այդ էլ անցավ և ասես միանգամից հազարավոր լույսեր փայփլեցին նոր իջնող մթության մեջ: «Եվ այս բոլորը կատարվել է վերջին երկու-երեք տարում», — մտածեց Սուրենը բարձրածայն:

Այո՛, հրաշք էր դարձել երևանը:

3.

Կրկին քայլում էր Սուրենն Աբովյանով: Կողքից անցնող աղջիկները ժպտում էին այնպես, ինչպիսին նա հիշում էր Աստղիկին: Հետարրքիր է, այժմ էլ նույն ամաշկոտ, սահմանափակ, ինքն իր մեջ ամփոփված աղջիկն է նա, թե՝ փոխվել է այս տարիների ընթացքում: «Պրոպագանդայի տուն», կարդաց նա, նկատելով ներս մտնող ինտելիգենտ մարդկանց:

Զդալով մեկի ձեռքն իր ուսի վրա, նա ետ դառավ: Մանկության ընկերն էր: Նրանք մի վայրկյան նայեցին իրար շփոթված և զարմացած, ապա միանգամից նետվեցին իրար գիրկ:

— Ինչո՞ւ այսքան ուշ զորացրվեցիր, — հարցրեց ընկերը. դիտելով Սուրենի փոխված, առնականացած դեմքը, ողջ արտաքինը, ապա նկատելով ուսաղիրները, առանց պատաժանի սպասելով, ժպտաց: — Գնդապե՞տ ես, հիանալի է:

— Ո՞ւր ես շտապում, — հարցին հարցով պատասխանեց Սուրենը:

— Այնտեղ, ուր և ինքդ: Գնանք, երկի զեկուցումն սկսվել է: Սուրենը ժամանակ շգտավ հարցնելու թե ի՞նչ զեկուցում է այդ. կարոտն ստիպեց նրան հետեւ ընկերոջը:

Եեփուղուն էր դահլիճը: Ինչոր հանդիսավորություն էր տերում: Այստեղ էին շատ դասախոսներ, գրականագետներ, ուսանողներ:

Տեղ շգտնելով, երկու ընկերները կանգնեցին վերջում:

— Իսկ ի՞նչ թեմա է, — վերջապես Համբերելով՝ ընկերոջը դիմեց Սուրենը:

— Ա՛, ցանկացել է Հանկարծակիի, բերել քեզ, հետաքրքիր է:

Բեմ ելավ նախագահը: Դեռ շղաղարած աղմուկը թույլ շտվեց նրանց լսել, թե ինչ ասաց նա: Ապա արագ քայլերով բեմ քարձրացավ ճաշակով հագնված երիտասարդ մի աղջիկ: Նրա աշքերի արտահայտությունն ավելի էր ուժեղացնում հավասարակիու մարդու տպավորությունը:

— Այս օրիորդը մեկ ամիս առաջ հիանալի կերպով պաշտպանեց իր դիսերտացիան, — Թեքվելով դեպի կողքի Հասակավոր տիկինը, շշնչաց մի ծերունի: — Երանի թե այսպես ավարտեր և մեր Հասմիկը:

Սուրենը Համբերելով մի քայլ առաջ անցավ: Այդտեղից մի կերպ երեսմ էր զեկուցողը: Ինչոր անհանդիսա քան կատարվեց Սուրենի հետ: Նա զգույշ նայեց ընկերոջը, որը մյուս ունկնդիրների հետ, ուշադիր հետեւում էր զեկուցմանը:

— Շատ լավ է խոսում, այո, — ասաց Սուրենին, զգալով ինի սեղմումը: — Այնպես ես ապշել, կարծես առաջին անգամ ես հանդիպում:

Զեկուցման վերջին ֆրազն արտասանելիս, մի պահ կանգ առավ աղջիկը՝ հայացքը գամելով դիմացից առաջ եկող զինվորականի վրա: Մեծ ձիգով ավարտեց կիսատ նախադասությունը և մինչ նախագահը կմոտենար սեղմելու զեկուցողի ձեռքը, վերջինս թեթև ցատկումով իջավ բեմից:

Ծափահարությանը չէին մասնակցում միայն Սուրենը և Ասուղիկը: Հաստրակության հետ դուրս ելան և նրանք:

Երեանյան արևը փովել էր լայն, տիրակալ, զերմ...

— Երեսի Արտաշեսն ասաց, որ ես այստեղ եմ, — Սուրենի ընկերոջն ակնարկելով հարցրեց Աստղիկը:

— Ես ոչինչից տեղյակ չեմ, Ես դեռ ոչինչ չեմ հասկանում,— միայն կարողացավ ասել դեռ շսթափված ընկերը:

— Այժմ պատասխանիր ամենակարևոր հարցին,— Աստղիկին դարձավ Սուրենը:— Որտեղ եք ապրում. շորս օր է քեզ եմ փնտրում:

— Մի՞թե մոռացել ես...

— Երբեք չեմ կարող մոռանալ. բայց այժմ այնտեղ կանգնած է եռահարկ մի շենք:

— Այո, Հենց այնտեղ է և մեր բնակարանը,— վրա բերեց Աստղիկը մի տեսակ հուսաղրված ժպիտով:

— Սակայն մինչև շենքի կառուցելը դու պետք է փոխեիր հասցեղ: Մինչդեռ քո ոչ մի նամակում ոչինչ չես դրել այդ մասին,— տարակուսած խոսում էր Սուրենը:

— Շատ բան է փոխվել Երևանում: Մեր բնակարանը կառուցվեց ամուսնու ամիսներին, երբ մենք ամառանոցում էինք:

— Հիմա՝ ոմ հասկանում,— հիացած բացականչեց Սուրենը: Իհարկե քաղաքը կփոխի իր տեսքը, անձանաշելի կղառնա, երբ այսպիսի շենքերը կառուցվում են ընդամենը երկու ամսում: Այո՛, շա՛տ է փոխվել մեր երիտասարդ Երևանը, բայց ավելի շատ դո՛ւ ես փոխվել, իմ սիրելի՛...



ԿԱԹՈՒՑՎՈՂ ԶՐԱՆՑԲՈՒՄ

Հունիսյան վաղ առավոտ է, Արարատյան դաշտի շքեղ առավոտ: Մեր ավտոն սլանում է Էջմիածին ձգվող խճուղով. օդը դեռևս մեղմ է. գուրեկան զովությունը գուրզուրում է դեմքդ: Ելացիկ կատարները հովին պարզած մեղմորեն օրորվում են ձանապարհի եղրերին բարձրացած դալար բարդիները, ապա ձրգվում են գեղեցիկ, նորակառուց կղմինդրածածկ բնակարանների շարքերը, որոնց կտուրի տակ հայրենադարձ հայը իր նոր կյանքն է ստեղծագործում:

Արեգակի վար հորդացող շողերի մեջ, զմրուխտե կանաչն է շոյում հայացքդ: Հրճվանք են պատճառում քեզ այդ կանոնավոր, ինամքով ու սիրով մշակված այգիները, որոնց կանաչ թփերի տակ շուտով, սև ու սպիտակ սաթի երանգներով կհյութավորվեն ող կույզները: Ապա ավելի հեռվում բամբակենու լայնածավալ դաշտերն են ամփոփում հորիզոնը:

Մեքենան խճուղուց թերվում է դեպի աջ, ու հանկարծ այդիների հոգեզմայլ տեսարանը շքանում է: Այժմ մեր առջև փովում է չոր, ամայի, բուսականությունից զորի հսկայական դաշտը, կամ «Ղուերը», ինչպես ասում է ժողովուրդը:

Նա ձգվում է հարյուրավոր հեկտարներով, դա հսկայական հարստություն է, որ մնացել է այդպես անմշակ, խոպան, անպրտուղ: Նա նայում է քեզ դժոն, քաղցած, կամ ավելի ձիշտ ծարավից տոշորվող մարդու սպասողական հայացքով: Դարեր շաշունակ մինչ այսօր սպասում է:

Զրի է սպասում նա, զուր տուր նրան և նա կդառնա ձիշտ այնպես շքեղ, շոալ, առատաձեռն, ինչպես հեռվում մնացած այգիները: Թի չէ հիմա նա միայն գաճաճ թփեր ունի, որոնք միջօ-

բեյի տապից վախեցած իրենց մանրիկ տերեներն արդեն փշոքի
են փոխում։

Բարձր հողաթումքն է գծագրվում հորիզոնում — դա նոր կա-
ռուցվող ջրանցքն է. Հորիզոնի ծայրից ծայր ձգվող այդ հսկա-
յական հողաթումքը ջրանցքը փորելուց դուրս թափած հողն է
Քսանութ կիլոմետր երկարությամբ, իսոր, հսկայական ակոսի նր-
ման խրվել է նա Արարատյան դաշտի կուրծքը։

Ավտոն կանգ է առնում ջրանցքի կառուցման 5-րդ տեղա-
մասում, մոտենում եմ տեղամասի պետ՝ ինժեներ ընկեր Մա-
սումյանին ու հայտնում ջրանցքը դիտելու իմ ցանկությունը։

Ամենայն սիրով՝ ասում է նա ժպտալով, շատերն են գալիս
մեր ջրանցքը դիտելու, բայց այ մինչև այժմ գրող մարդկանցից
և ոչ ոք ցանկություն չի ունեցել գալու մեզ մոտ, ինչ է կարծում
են բան չե՞ն գտնի գրելու, դիտեք թե ինչե՞ր են եղել այստեղ,
ու ինչե՞ր են լինում... ասում է նա իր գործով ապրողի և նրանով
հպարտացողի ջերմ հուզմունքով։

Ես քիչ խոսքեր ունեմ արդարացնելու մեր գրողներին, միայն
կարողանում եմ շշնչալ — դեռ կգրեն շատ կգրեն ձեր այդ հոյա-
կապ ջրանցքի, ձեր հրաշալի կառուցողների ու նրանց հերոսական
մաքառումների մասին...

— Ուշ կլինի, մենք շուտով վերջացնում ենք, ջրանցքը իր կա-
ռուցման վերջին հրատապ ամիսն է ապրում։

Մենք քայլում ենք ջրանցքին զուգահեռ ձգվող բարձր հո-
ղաթմբով. ցածում ջրանցքի մեջ եռում է աշխատանքը — մարդ-
կային ուժն է հորդում այնտեղ, որ հետո զուրը հորդի։ Էջմիածնի
շրջանի կոլխոզնիկներն են կառուցում ջրանցքը, նրանք ճանա-
պարհ են բացում ջրի համար, որը հաղեցնելու է իրենց բամ-
բակի դաշտերի, այդինքան ու հանդերի վաղեմի ծարավը և ահա-
սկսված 1944 թվից առանց դադարի, տարվա շորս եղանակներին
եռում է այստեղ աշխատանքը. այս տարվա խստաշունչ ձմեռն
անգամ անկարող եղավ ընդահատելու նրանց։

Հեռվից կարձ ընդհատումներով, խուլ թնդյուններն ան լսվում
և հողի հետ միասին երկինք են թոշում պայթող ժայռի բեկորները.

— Դժվար բան է լեռնոտ երկրում ջրանցք կառուցել, ասում է ընկ. Մասումյանը, ամեն քայլափոխում երկիրը բացում է քողեմ իր ժայռոտ, անխոցելի կուրծքը և ահա միայն դինամիտով է Հնարավոր լինում խոսել նրա հետ. այդ է պատճառը, որ էքսկավատոր օգտագործելու հնարավորությունն անդամ բացառված է, այնայեցեք՝ ջրանցքի հատակից մինչև ձորի բարձր լանջը, ձգվում է նասիլկաներ կրող բանվորների զույգերը, որոնք դուրս եին հանում ավելորդ խիճը և հողը:

Բարձր ափից դիտողին ջրանցքը թվում է մի կատարյալ մեղմանոց. ամեն մի բրիգադա ներկայացնում է կարծես մի-մի մեղմարնտանիք, որը զբաղված է իր խորիսիով լցնելով:

Էջմիածնի շրջանի յուրաքանչյուր գյուղ իրեն բրիգադան է ուղարկել այդտեղ և բրիգադան էլ կոչվում է հենց իբ գյուղի անունով և որովհետև բրիգադայի պատիվը դա իր գյուղի պատիվն է, ապա այստեղ աշխատանքի մրցումը շափազանց լուրջ ընույթ է կրում: Ոչ մի բրիգադա կամ ավելի ճիշտ գյուղ առաջնությունը շիցանկանում կորցնել, իսկ եթե կորցրեց, ապա արժանանում է իր հարեան գյուղերի կշտամբանքին՝ այնքան ժամանակ, մինչև շիդերակատարում իր պլանը:

Այդ ժամանակ մենք անցնում ենք Հայթաղ գյուղի բրիգադայի մոտով, նրանց աշխատանքի ամենահրատապ մոմենտն է, երբ նրանք արդեն իրենց հողային աշխատանքները վերջացնած, ջրանցքի պատերը բետոնապատելու դորձն են նախապատրաստում: Այս բրիգադայում հատկապես ցայտուն է կանանց ճկուն, արագաշարժ աշխատանքը. նրանց գույնզգույն դլխի թաշկինակները հաճելի խայտարղետություն են մտցնում տղամարդկանց գորշագույն արտահագուստների հետ:

— Որտեղ, որ կանայք կան, նկատո՞ւմ եք, աշխատանքը ավելի արագ է կատարվում, նրանք մեր ջրանցքի «թեթև հեծելազորներ», ասում է ընկ. Մասումյանը, և դա իսկապես որ այդպես է:

Բետոնը արդեն պատրաստ է, նա լցնում է դուլերը և ապա այնտեղից լավայի ծանրությամբ, առատորեն հոսում է ջրանցքի քարաշեն պատի վրա, ապա շուտով ամրանում է, քարանում, անխորտակելի դարձնելով ջրանցքի պատը ոչ միայն ջրի, այլև ժամանակի հանդեպ:

Հանկարծ քար բերող կանանցից մեկը ինչ որ բան նկատելով

կոանում է. նա ձեռքով խնամքով հավաքում է շիթի ծայրից դուռ
ցայտող բետոնը ու լցնում քարի արանքը. ճիշտ այդպես, երկի
նա քերում է իր տանը տաշտի մեջ մնացած խմորի մնացորդը:

Կեսօր է, արևն այրում է արդեն, այրում է համառորեն, դա-
ժանորեն, քրտինքը ծորում է գեմքերից դեպի բետոնը ու դնում է
խառնվելու, ձուլվելու նրա հետ:

— Ահա մեր լավագույն բետոնագործ վարպետ Ավագյան Բա-
բաջանը այս մուրճով աշխատող այն ծերունին է, օրիւ պլանը
կատարում է 160—200 տոկոսով, ցույց է տալիս ինձ Մասումյա-
նը, և դիտե՞ք նա ում հետ է մրցում, նրա հետ, այս որ դադար-
կում է բետոնը:

— Նա միթե՝ կարող է այդ երիտասարդի հետ մրցել, և զար-
մացած սկսում եմ նայել մերթ Ավագյան Բաբաջանին և մերն
երիտասարդին, որի անունը Ռուբեն է: Երկուսի մոտ էլ նկատ-
վում է նույն կենտրոնացած լուրջ հայացքը: Հասակավոր, ծեր
վարպետի մոտ շարժումներն ավելի համաշափ են, կարծես կան-
խորշված, իսկ Ռուբենի մոտ ներքին անսպառ երիտասարդական
ավյունն է, որ հորդում է նրա բազուկներով և այդ ավյունի ծախ-
սումը կատարվում է կարծես ավելի շոայլորեն, քան ալահանջմուռ
է տվյալ բոպեին:

— Ամեն անգամ բետոնային աշխատանքի որակը ստուգելիս,
ասում է Մասումյանը, նրանք երկուսն էլ չափազանց հուզվում են.
վարպետ Բաբաջանը ասում է ծիծաղելով «Միք նայի, որ ես ծեր
եմ ու Ռուբենը ջահել, դուք իմ կատարած բետոնին նայեք»: Լավ
գնահատական ստանալուց հետո երկու վարպետներն էլ հուզված
կրկախառնվում են հոր և որդու նման. այդ կատարվում է ողջ
ըրիգադայի հրճվալից բացականչությունների տակ:

Իսկ այժմ մենք մոտենում ենք մի հսկա, ամրակուռ շինության.
դա ակվեդուկն է:

Ակվեդուկի շինարարությունը մոտենում է իր վախճանին.
մի քանի մետր է մնացել բետոնապատման համար, այդ բաց տե-
ղից երեսում է երկաթյա ձողերի բավականին բարդ ցանցը՝ արմա-
տուրան: Դա հայրենադարձ երկաթագործ վարպետներ հայր և
որդի Սենիկյանների ձեռքի արդյունքն է:

Այդ բոպեին որդուն՝ Հարությունին է մոտենում մի երիտա-

սարդ, դա ակվեդուկի աշխաղեկ և բանվորության սիրելի Քաջիկ Գևորգյանն է։ Նա մատիտի արագ շարժումներով ինչոք գծագրում է տախտակի վրա, ապա նրա և Հարությունի միջև սկսվում է կարճատե, բայց բուռն խոսակցություն, ճիշտ է շնայտծ այդ խոսակցությունը կատարվում է ձեռքի շարժումների ու միմիկայի միջոցով, բայց նրանք հրաշալի են հասկանում իրար, արդյոք որն է նրանցից համրը, ինձ թվում է երկուսն էլ, որովհետեւ երկուսի եռողմից էլ այդ խոսակցությունը կատարվում է շափականց վարժուարագությունը կամոզվում, նա Քաջիկի ձեռքից վերցնելով մատիտը, սկսում է ինքը գծագրել. մատիտը կրկին Քաջիկի ձեռքն է, նա շեշտում է իր գծագրել և կրկին բացատրում։ Այժմ Հարությունի դեմքով տնցնում է իմացության ժամանակ, նա արդեն ըմբռնեց իր սխալը և այժմ փոխադարձ համաձայնությունն է նրանց մեջ տիրում։ Բայց Հարությունի հայրը, որ լուռ դիտում էր նրանց, թափահարում է ձեռքը— Քաջիկ, շեմ կարծեր, որ այդպես ըլլա։ Բացատրելու հերթի այժմ Հարությունինն է։ Հոր և որդու միջև տեղի ունեցող բացատրությունը վերջանում է որդու լիակատար հաղթանակով։

— Այդպես— ասում է Քաջիկը և մտերմաբար սեղմում Հարությունի ձեռքը։ Միայն հիմա եմ գլխի ընկնում, որ համրը Հարությունն էր։

— Ինչպես եք կարողանում այդպիսի բարդ հաշվումները նրան հասկացնել, ասում եմ Քաջիկին։

— Պատկերացրեք, որ համր որդու հետ ավելի հեշտ եմ բացատրվում, քան թե հայրիկի հետ։ Հայրիկին հասկացնելը թողնում եմ Հարությունին, այդ նրա դորձն է, ու նա ժպտում է համարյա մանկական ժպիտով, արեից թրծված դեմքի վրա շողացնելով սպիտակ ամուր ատամնաշարը։ Ու արդեն վստահ լինելով որ գործը կարվի իր ցանկացածի պես, փութեատ, թեթև քայլերով շտապում է բետոնի հսկա, փայտյա կաղապարը պատրաստող վարպետների մոտ ու շափում նրանց կատարած աշխատանքը։

— Այ այսօր էլ բան չունեմ ասելու, այսօր խսկականն է, ասում է Քաջիկը վարպետին։

Վարպետը լուր ծծում է ծխամորճը, սակայն զգալով, որ մարած է, լուցկի փնտրում գրաններում, բայց ետեից լսելով բայցերի ձայն, ետ է դառնում դեպի մեզ։

— Ա՛յ տղա լսողն էլ կասի թե ինչ... ընդամենը մեկ սանտիմետր էր տարբերությունը և դու այդ մեկ սանտիմետրի համար քանդել տվիր, ասում է նա դեռևս շգտնելով լուցկին.

— Վարպետ ջան, էլ ոչ մի խոսք, ակվեղուկի ամեն մի քառակուսի սանտիմետրը հաշվով է կառուցվում, մեկ միլիմետր էլ, որ ավել եղած լինի պիտի քանդել, ու նկատելով վարպետի փնտությունը, հանում է իր գրականի լուցկին ու վառում նրա ծխախոտը:

— Քաջի՞կ, ձայն են տալիս նրան, զրարկելակը կառուցող բրիգադից, նա շտապում է դեպի այնտեղ։

Այդ մեր լավագույն բրիգադան է, ասում է Մասումյանը, և հայտնի է «Գազավանների բրիգադ» անունով։ Նրանք բոլորն էլ հայրենադարձներ են։

— Բայց լավ տղա է երեսում ձեր Քաջիկը, ընդհատում եմ Մասումյանին. նա իր տարիքի մեջն է և խելույն զգացվում է, որ նասկ կատարող չէ։

— Ճիշտ եք նկատում, նա սոսկ կատարող չէ, նա շատ ավելին գիտի, քան պահանջում է իր համեստ պաշտոնը, նա շատ է հեռացել այդ պաշտոնից։ Այդ է պատճառը, որ մենք վստահել ենք նրան մի այնպիսի բարդ և միաժամանակ նուրբ կառուցվածք, ինչպիսին այդ ակվեղուկն է, որը պահանջում է մեծ զգուշություն և գործի հմտություն։

Քաջիկը լավագույն կոմերիտական է, իր գործը տանում է աշխուժ, արագ երբեք չեք զդա, որ նա հոգնած է, կարողանում է լեզու դանել բոլորի հետ։

— Նույնիսկ համրի հետ— նկատում եմ ես։

— Այս, նույնիսկ համրի հետ, և այդ է պատճառը, որ նա շահել է բանվորության հարգանքը, մի հարգանք, որ հեշտությամբ ձեռք չի բերվում։ Ահա շուտով կմերջացնենք զրանցքը և աշնանը Քաջիկին կուղարկենք Պոլիտեխնիկ ինստիտուտ սովորելու— ասում է Մասումյանը։ Նրան սպասում է հրաշալի մասնագետի լուգադույն ապագա։

Ինձ զարմացնում է քսաներկուամյա, այդ գրեթե պատանին, որը շունենալով բարձրագույն մասնագիտական կրթություն և ոչ էլ երկար տարիների փորձ, իր բարդ աշխատանքը դե-

կավարում է այդպիսի վարպետությամբ, մի աշխատանք, որին նա նվիրաբերում է իր ողջ ուժն ու ընդունակությունները:

Ինձ թվում է, որ կարծես ես վաղուցվանից գիտեմ, ճանաչում եմ նրան. Ես ժպտալով բռնում եմ նրա թեր.

— Քաջիկ դու ինչքան քաջն ես... իսկապես է, ինչքան քաջն ես դու.

Նա ես ժպտում է զուսպ, բայց նր արժանապատվությունը գիտակցողի ներքին հրճվանքով: Նա գիտի, որ ինքը քաջ է, բայց նա ժամանակ չունի գովասանք անգամ լսելու, նա շտապում է դեպի ավագ դատարկող մեքենաները:

Այսպիսին են ջրանցք կառուցողները: Նրանց չի վախեցնում ոչ այս հեղձուցիչ տապը, ոչ հոգնությունը և ոչ էլ իրենց դեմ եղնող ժայռերը, նրանք չուր պետք է հասցնեն բամբակի դաշտերին, այդիներին, նորաշեն ավաններին և այս հսկայական տափաստանին:

Ահա այս է, որ ուժ ու եռանդ է ներշնչում և մոռացնել տալիս և հոգնություն և դժվարություն:

Այսպես է կոփվում կոմունիստական դիտակցությունը:

Շուտով Զանգվի արծաթե կոհակները ջրանցքով կհոսեն, ու քս հիմա պատկերացնում եմ այդ օրը, ջրանցքը կառուցողների հրճվանքը, խանդավառությունը:

Շուտով, շուտով կզա այդ օրը:



ՀԱՆԴԻՊՈՒՄ

Լենինգրադում հանդիպեցի մի ոռու կնոջ:

Կարիք չկա, որ տամ նրա անունը: Նրա նման հազարավորներ, տասնյակ հազարավորներ կան այդ քաղաքում: Եվ ճիշտ այդ պատճառով էլ ավելի հետաքրքիր է նա: Նույնը չէ, եթե նրան ասեմ նատաշա, թամարա, թե Մարիա:

Նա ծնվել է այս քաղաքում: Մեծացել է նեվայի եղերքում ու սիրել նրան որպես իր մասը, իր մեծ ու հզոր հայրենիքի, սիրել նրան ինչպես իր անձը, իր ծնողներին, իր ընկերներին:

Այստեղ է նա գնացել դպրոց, սովորել համալսարանում, սիրահարվել ու ամուսնացել իր ընկերներից մեկի հետ: Հեղափոխության այս քաղաքում նա կարդացել է Շեքսպիրին, Դանտեին, Ռոլանին, ու հիացել նրանցով Պուշկինի, Տոլստոյի ու Գորկու հավասար: Նա տարվել է Բեթհովենի առնական սիմֆոնիաներով, Շոպենի մելոդիաներով, ու Չայկովսկու, Խաչատրյանի երաժշտությունը:

Նա ապրել է կյանքը այնպես, ինչպես պետք է ապրեն բոլոր աշխատող ու լավ մարդիկ: Նա երջանիկ է եղել՝ որովհետև արժանի է եղել դրան:

Եվ սակայն այստեղ են սպիտակել նրա մազերը, երբ երեսոն տարեկան է հազիվ:

Մենք հանդիպեցինք իրար նոր տարվա դիշերը, դրողների տան դահլիճում:

Հիանալի ու բարձր տրամադրությունների գիշեր էր այդ: Մարդիկ դիմավորում էին նոր տարին ավելի վստահ, ավելի ապահով և երջանկության զգացումով: Եվ վեհ էր մանավանդ նրա համար, որ հիշում էին մոտիկ անցյալի փառահեղ օրերը, և իւր-

մում նրանց կենացը, իրենց հարազատների ,ընկերների, նրանց, ովքեր իրավունք ունեին այդ օրը լինելու սեղանների շուրջը, բայց չկային, մնացել էին այն ճանապարհի վրա, որտեղից հաղթանակն էին ուղարկել նոր տարվա այս ուրախ դահլիճին, հերոսական լենինգրադին, հարազատ երկրին։ Մենք անցել էինք սովորական ծանոթների սահմանը։ Խոսել էինք մեր ապագայի հույսերի, ներկայի ձգտումների շուրջ։ Նա պատմել էր իր մասին, ու ավելի, տեղ եմ իմ թափառական, անհայրենիք կյանքի տիտր պատմությունը։

Նա իր շամպայնի բաժակը մոտեցրեց ինձ։

— Խմենք ամուսնուս հիշատակին, — ասաց, — Հիանալի մարդ էր։

Նրա աշքերի մեջ արցունք երևաց, տատանվեց, բայց վարչիցավ։

— Դուրս գնանք, — ասացի, — մաքուր օդ շնչենք մի քիչ։

Մենք անցանք պարող դույգերի միջով։ Նվազախոսմբը զվարի եղանակ էր տարածում դահլիճում։ Իսկ դուրսը ձույնը իջնում էր մեծ փաթիլներով, ուրախության ու զսպված թախիծով ողողված մեծ քաղաքի վրա։

— Կովի առաջին իսկ օրերին գնաց նա, — պատմեց ընկերուհիս, — ու այլևս բնավ չտեսա նրան…

Նա պատմում էր ցածր ձայնով, կցկտուր նախադասություններով, ավելի վերհիշելով ու իրեն գոհացնելով, քան ինձ տսելու որամադրությամբ, բայց ես լսում էի նրան ու լրացնում, աշխատելով պատկերացնել այն ամենն, ինչ եղել է։

Տաղանդավոր ու երիտասարդ նկարիչ էր նրա ամուսինը, տաղանդի տակավին ծաղկման, բացման ժամանակաշրջանում։ Նրա նկարները զեղուն են կյանքով, մարդկանց հանդեպ բուռն սիրով։

Գնացել է նա, ու երկար ժամանակ ոչ մի լուր չի ստացվել նրանից։ Եղել են սպասման, անհանգստության, տառապանքի անվերջանալի օրեր։ Շատ ուշ միայն իմացել է, ծանր կերպով վիրավոր ամուսինը, կորցրած խոսելու, գրելու, արտահայտվելու ամեն կարողություն՝ մեռել է հիվանդանոցում։

Հետո, լենինգրադի պաշարման ծանր օրերն են եղել արդեն։

Եվ նա մոռացած տմեն հանգստություն, մոռացած իր վշտերն ու տառապանքները, մոռացած տմեն թուլություն, իր կարողությունները, իր կյանքը նույնիսկ տրամադրել է հաղթանակի զործին:

Ու այդ զործը եղել է վեհ, բայց շատ ծանր: Եվ սակայն նորություն տեսակի դժվարություններին տոկացել է որպես խորական քաղաքացին իր հայրենիքի, որպես աղնիվ մարդ ու արդար դործի պաշտպան:

Քաղաքում տիրել է աննկարատղելի, աներեակացելի վիճակ: Այս հակա քաղաքի միլիոնավոր բնակիչները զրկվել են ապրուստի ոռվորական հաւաքավորություններից, վերացվել են հաղորդակցության բոլոր միջացները, չի եղել խմելու ջուր:

Այս, խմելու ջրի համար, սպոտ նեղացի վրա ծակեր են բաշիլ, ու նույնիսկ տմենահեռավոր թաղաժաներից ուժասովառ կահացը և երեխաներ ջուր են տուն տարել:

Եյս բոլորով մեկտեղ, թշնամու բոլոր տեսակի ոռմքերը տեղացել են քաղաքի վրա, չխնայելով, խաղաղ բնակիչներին կահանց, մանուկներին, հիվանդներին:

Թշնամին ուղեցել է սովոր ու սարսափի միջոցով խորտակել մարդկանց անխորտակելի կտմքը, ազատ ապրելու իրավունքը, հաղթելու, վճռականությունը:

— Մի օր, — տաց նա, — աշխատանքից տուն դարձա Հոգնուծ. այդ ժամանակ իբրև քուցը էի աշխատում հիվանդանոցում: Մեր փողոցում մնացի շվարած, քարացած: Զէի կարողանում հասկանալ, չէի ուղում հավատալ, բայց մեր մեծ բնակարանից մնացել էին միայն փլատակներ: Զախաջախված դաշնամուրի կրտորները, զրքի էջերի հետ մխում էին տակավին:

— Մայրիկս, — դոռացի ես ու նետվեցի քարերի վրա, սկսեցի նայել ամեն կողմ... և խելապես, այդ բոլորի մեջ զտա այն, ինչ մնացել էր նրանից... անձանաշելի դարձած, մարդկային տմեն կերպարանը կորցրած մայրիկիս...

Նա լոեց: Նրա միալար ձայնը դադարեց հնչելուց, բայց իմ երեսկայությունը կանգ չէր առնում, նա շարունակում էր պատկերացնել: Ներսից թեթև լսվում էր երաժշտությունը, իսկ ձյունը, մեծ փաթիլներով իջնում էր քաղաքի վրա, սպիտակով ծածկում փողոցներն ու տների տանիքները:

— Մայրիկի համար այդ ժամանակ պրեթե շիարողացու լոլ, —
տսաց նու ու աշքերը լցվեցին արցունքով:

Ես հայոցքս հեռու պահեցի նրանից: Ուզում էի խոսակցու-
թյունը վոխել արդեն, բայց նա տիրապետեց իրեն:

— Ո՞ւ այդ ժամանակ լաց լինել չէի կարող: Դրան կարիք չկար
և նույնիսկ մնասակար էր: Մենք պետք է հաղթեինք թշնամուն,
որա համար անհրաժեշտ էր առել թշնամուն, ուժեղ լինել, անողոք
որա հանդեպ ու կովել մինչև վերջ:

Մենք երկար, լոեցինք: Շարունակում էինք մտածել նույն
նյութի մասին և փորձում հեռացնել այն մեղանից: Բայց արդեն
կարելի չէր:

— Եղբայրս մահացել է Պուշկինոի ճակատում, — շարունա-
կեց նա մեղմ, կարծես ոչ թե պատմելով, այլ վերհիշելով միտյն, —
շատերը մահացան... բայց կյանքը, աղատ, երջանիկ տպելու
ցանկությունը շմահացավ: Զմահացավ մեր տոելությունը թշնա-
մու հանդեպ, և սերը՝ մեր հայրենիքին: Ու մենք հաղթեցինք:

Մյուս օրը երեկոյան մենք կրկին միասին դուրս եկանք քա-
ղաք: Անինդրադի հունվարյան ստոր քամին խփում էր մեր դեմ-
քերին: Մենք միացանք հաղարավոր մարդկանց, որոնք դրունում
էին փողոցներում ու հրապարակներում, շտապում էին տուն,
թատրոն, կամ կինո: Ես նայում էի նրանց դեմքերին: Բոլոր այդ
դեմքերը, վճռականություն արտահայտող այդ հայոցքները, խո-
սում էին անցյալի փառահեղ սլայքարների, ներկայի և ապադայի
շինարար, ստեղծագործ աշխատանքների մասին:

Մենք անցանք փողոցներ, կամուրջներ: Կանգնեցինք պալատ-
ների, թանդարանների դիմաց: Ու նա պատմեց նրանցից յուրա-
րանշյուրի մասին, ոռամքերի, ավերակների մասին:

— Բայց ոչ մի ավերակ չի երեւմ, — հարցորի ես դարձա-
ցած:

Նա թեթե ծիծաղեց զոհ ու հպարտ:

— Միթե կարելի է Անինդրադրում ավերակ թողնել, — տսաց
նու, — ոմքակոծությունից անմիջապես հետո սկսվում էր վերա-
կառուցումը: Նրանք քանդում էին, մենք համառ կերպով կառու-
ցում էինք: Պատերազմն ավարտվեց: Այժմ մեր կյանքի բոլոր մա-

սերում դուք կարող եք տեսնել վերելք, ծաղկում, ձգուում դեպի
նորր, դեպի էլ ավելի լավագուցնը:

— Արտասահմանում դրում էին, որ պաշարումից հետո Լե-
հինդրադը չի կրնի, — ասացի ընկերուհու մի քիչ հուզմունքով:

Նա շպատամխանեց: Մենք թեքիլեցինք նեվսկու ոլոռսալեկտից,
անցանք Զմեռացին պալատի կողքով ու կանգնեցինք նեվայի դի-
մաց: Դեռք սառած էր ամբողջությամբ:

— Արտասահմանում, — կրկնեց ընկերուհիս, — շատ բան են
պրում այնուեղ մեր մասին. մեր բարեկամները դրում են իրակա-
նությունը, իսկ մեր թշնամիները նոր պատերազմ են հրահրում:

Մենք շարունակեցինք քայլել: Նույնիսկ խոսեցինք երբեմն,
բայց իմ մտքում հնչում էր նրա վերջին խոսքը.

— Համիտենական է Լենինդրադը... համիտենական:

Այո, համիտենական է մեր մեծ երկիրը, և իզուր են ամերիկ-
ան խմանելիստների բոլոր «պլաններն ու ուխտերը»: Հզոր,
անխորտակելի է նա, քանի որ խաղաղության, ժողովուրդների
երջանկության նպատակը ունի դրած իր դրոշի վրա: Նա վեհ կե-
նա բոլոր անարդարությունների, ճնշումների, խմանելիստա-
կան ձգտումների դեմ ու աշխարհի բոլոր խաղաղասեր ժողո-
վուրդներին առաջնորդելով, պատերազմի հրձիդներին կուղարկի
այն ճանապարհով, ինչ ճանապարհով որ դնացին ֆաշիստական
ոհմակները:



Լենինդրադում ես հանդիպեցի մի ուստ կնոջ: Ո՛չ, Լենինդրա-
դում ես հանդիպեցի ուստ մեծ ժողովրդին, սովետական ժողովր-
դին: Այն ժողովրդին, որ անպարտելի է: Այն ժողովրդին, որ խա-
ղաղություն է ուղում, որ ամեն ինչ կանի պահելու համար արյան
դնով շահած խաղաղությունը, բայց նա առանց տատանվելու վեր
կկենա դարձյալ, եթե որևէ մեկը համարձակվի ձեռք երկարել իր
երկրին, իր երջանկության, իր աղատության: Այդ ժողովուրդն
ատում է պատերազմը և դրա համար էլ մինչև վերջը կկռվի պա-
տերազմի հրձիդների դեմ.

Ես ճանաշեցի մի ուստ կնոջ, բայց նա ամբողջ Խուսաստանն
էր, քանի որ նրա նման են մտածում մեր երկրի բոլոր ազնիվ
մարդիկ:

ԲՈՎԱՆԴԱԿԱՆԻ ՅՈՒՆԻՑԱԲԵՐ

Էջ

1. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ— Առաջնորդին	3
» Հերոսը	4
2. Վ. ԿԱՐԵՆՑ— Օռոսական հնչյուն	5
3. Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ— Ստուգման գրքույկ	5
4. Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ— Հերոսներին	8
5. Ս. ՄԱՎՈՒՆԵՔ— Հաղթանակի այզին	9
6. Ս. ՕՀԱՆՅԱՆ— Երգ գրված դաշտում	10
7. Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ— Սևանի լույսերը	11
8. Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ— Լենինի արձանի առաջ	12
» Դու իմ սրտում	12
» Աչքերիս նետ	12
9. Փ. ԿԱՅԺՔԱՐՅԱՆ— Սովետական նայելնիքին	13
10. Ե. ՍԻՄՈՆՅԱՆ— Երեանին	14
11. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ— Գույների երգը	15
12. Ս. ԱԼԵՔՅԱՆ— Սոնետ Երեանին	17
13. Ս. ՄԻՔԱԼ— Անինական	18
14. Գ. ՖԵՐԵՇԵՔՅԱՆ— Գինվորի մահը	19
15. Է. ՄԻՐՏՋՅԱՆ— Գաղել	20
16. Վ. ՊԵՏՐՈՎՅԱՆ— Խոսք Արովյանին	21
17. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ— Ճակատային հուշ	22
18. Ս. ՓԱՐՍԱԴՅԱՆՅԱՆ— Ճրաժեշտ	23
19. Գ. ԶԱԼԻԿՅԱՆ— Արովյան	24
20. Լ. ՄԻՐԻԶԱՅՅԱՆ— Հայրենիքին	28
21. Մ. ՌԱԶԻՔ— Երկու կյանքի պատմություն	29
22. Մ. ՀՈՎՈՒՆԵՔ— Տեմստիլում	30
23. Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ— Պուշկինին	31
24. Ս. ՍԱՀԱԿՅԱՆ— ***	32
25. Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ— Միշուրինյան այզի	33
26. Հ. ԳԱՅՐԻԵԼՅԱՆ— Այս մանուկը	34
27. Վ. ՄԱՐՈՒԹՅԱՆ— Զոհված ընկերոջս	35
28. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ— Մարտունիկ	36
29. Ա. ԱՅՎԱԶՅԱՆ— ***	38
30. Շ. ԹՈՐՈՍՅԱՆ— Սերմնացան	39

31. Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ— Խնդուրյուն	40
32. Գ. ԱԴԱՄՅԱՆ— Նվեր հնգամյակին	41
33. Մ. ԹԱՐՅԱՆ— ***	42
34. Լ. ԳԵՐԵՇՅԱՆՅԱՆ— Սպասում	43
35. Վ. ԲԱԲԱՅԱՆ— Աբովյանի տունը	44
36. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ— Հիշում էս	46
37. Բ. ՅԱՅԼՈՅՅԱՆ— Շիրակի արտում	47
38. Ա. ՔՈԶԱՐՅԱՆ— Բանվարի խինդր	48
39. Ա. ՇԱՀԱԳԻՉՅԱՆ— Իմ սիրուն արտույտ	49
40. Ի. ՔՈԶԻՆՅԱՆ— ***	50
41. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ— Ճարտարապետը	51
42. Ա. ՊՈՒՇԿԻՆ— Ա. Պ. Կերնին, իշխան, ՀԱՐՅԱՆ	53
43. Շ. ԹԱԹԻԿՅԱՆ— Երք խիղճը հանգիստ չէ	54
44. Գ. ԱՐԵՎՅԱՆ— Կոլխոզային առօրյա	60
45. Ա. ՍԵԿՈՅՅԱՆ— Ծննդավայրը	65
46. Օ. ՍԱՆԱՀՅԱՆ— Կառուցվող ջրանցքում	72
47. Գ. ՔԵՇԻՇՅԱՆ— Հանդիպում	84
Բովանդակուրյուն	84



Կազմեց՝ ՀՅ. ՀԱՎԱԿԱՆԻՄՅԱՆ
Խմբագրեցին՝ Ա. ԶԱՐՅԱՆ
ՀՄ. ՍԻՐԱՍ

ՎՀ 02568

Պատվեր № 533,

Տիրաժ 300

Հանձնված է արտադրության 25/VI 1949 թ.

Ստորագրված է տպագրության 28/VI 1949 թ.

Տպագրական 5½ մասուլ:

223

223

223

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220032156

(304)

